

2691

*Q. Undulipeltis ciliata*  
Tilapieye Green Bank  
Hingkulan 1907

891.99

U - 94

XVI, II.

201



-6 NOV 2011

2691

Ե Խ Ա Յ Լ Ն

Ա Ա Մ

Ն Ո Ր Դ Ի Ո Գ Ի Ն Ե Ս

Կ Ա Տ Ա Կ

Բնագիրն առաջին անգամ ներկայացրած է Թիֆլիսի քաղաքային թատրոնում՝ 1869 թուի Մայիսի 2-ին։



891.99

Ա-94

Հ

# ԵՒԱՅԼՆ

Կ. Ա. Մ

## ՆՈՐ ԴԻՌԳԻՆԵՍ

ԿԱՏԱԿ ԵՐԿՈՒ ԱՐԱՐՈՒԱՁՈՎ

100  
50  
8

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ

ԳԱԲՐԻԵԼ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑԻ

ԹԻՓԼԻԶ  
ԱՐԱԴԱՑԻՊ ՄՆ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ  
ՊՈՒՃԿԻՆԵԱՆ ՓՈՂՈՑ, 12

1907



# Ե Ւ Ա Յ Լ Ն

Կ. Ա. Մ

## ՆՈՐ ԴԻՌԳԻՆԵՍ

ԿԱՏԱԿ ԵՐԿՈՒ ԱՐԵՐՈՒԵԺՈՎ

ԹՐԻՖԼԻՋԻ ԹԱՄՐՈՆ, 1869 թ. Մայիսի 2-ին:

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ՄՈՍԵՅ,	վաճառական . . . . .	Պ. Գ. 2ՄՃԿԵԱՆ	
ՆԻՆՈ,	ՄԱՍԵՍԻ ԿԲՆԸ . . . . .	Տ. Բ. ԱՐԱՄԵԱՆ †	
ՀԱՅՈ,	ՄԱՍԵՍԻ ԿԲԱՍԵՐ ԿՂԲԱՋՐԸ, Կոյն-		
	պէս վաճառական . . . . .	Պ. Գ. ՄԻՐԱՉԵԱՆ †	
ՊԱՐՈՆ	ԵԽԱՅԼՆ, հարուստ երիտա-		
	սարդ, Նինօի հեռու աղջական . . .	Պ. Ա. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ	
ՍԵՐԴՈ,	ՄԱՍԵՍԻ գուքնի աշկերտ . . .	Պ. ՄԵՀՐԱԲԵԱՆ	
ԱՌԱՋԻՆ	ՀԻՒՐ,	ԵՐԻՄԱ-	Պ. ՏԵՐ-ԱՍՏՏՈՒՐԵԱՆ †
ԵՐԿՐՈՐԴ	ՀԻՒՐ,	ԱԱՐԴ	Պ. Ա. ՂՈՒԿԱՆԵԱՆ
ԵՐԲՐՈՐԴ	ՀԻՒՐ,	ՃԱՌԱ-	Պ. Ա. ԱՌԻՔԻԱՆԵԱՆ †
ՀՈՐՈՐԴ	ՀԻՒՐ,	ԿԱՆԱԵՐ	Պ. ՄԱՏԱԿԵԱՆ

Ուրիշ հիւրեր վաճառական գասից, սազանդար եաւանգուլն  
ու գուռնաչի Արտէմը իրանց խմբերով և ծաւաներ. Սազ,  
գուռնայ ու գուզուկ. երգեր և պարեր:

Առաջին արարուածը կատարվում է Մոսկահ տաճր, իսկ  
երկրորդը ձրս տաճ պարտեզում:

Անցքը պատահում է Թիֆլիզում վարսունական բուականերին:

ԲՆԱԳԻՐՆ ՆՈՒԻՐՈՒԱՆ

ՄԵՇԱՐԳՈՅ

ՊԱՐՈՆ ԳԵՈՐԳ ԶՄՃԿԵԱՆԻՆ

# ԵՒԱՅԼՆ

## ԱՐԱՐՈՒՀԱԾ ԱԹԱՋԻՆ

Բեմը ներկայացնում է Մոսէսի տանը մի շքեղ հիւրասենեակ երեք դռնով՝ աջ, ձախ և դիմացը. աջ\*) կողմը՝ մեծ լուսամուտ։ Հիւրասենեակը զարդարած է գեղեցիկ կահ-կարասիքով։ Արաստաղից կախած է ոսկեզօծ ջահ՝ հանգած մոմերով. յատակը ամբողջապէս ծածկած է գորդով։ Աջ կողմը՝ ընկողմարան, բոլորակ փոքրիկ սեղան և բագկաթոռ. ձախ կողմը՝ բազմոց, բագկաթոռներ և թանկագին սփռոցով ծածկած սովորական սեղան, որի վրայ դրած է մի ալբոմ. խորքում աթոռներ։ Պատից կախած են զանազան նկարներ ոսկեզօծ շրջանակներում։ Դռները զարդարած են թաւիչէ գրապրիներով, իսկ լուսամուտը նաև սպիտակ տիւլէ վարագոյներով։ Ռւր հարկն է՝ հայելիներ, թղթախաղի ծալովի սեղաններ, հանգած լապտերներ, հանգած մոմերով կանգէրրներ ու աշտանակներ, ծաղկէ փնջեր, կենդանի ծաղկիներ և վառարանի վրայ գրած ժամացոյց, որի սլաքները ցոյց են տալիս ժամը ճիշտ վեցը։ Ցերեկ է։

\*) Բեմական ցուցումներում՝ աջ, ձախ—պէտք է ընդունել միշտ հանդիսականների դիրքից նայելով։

## ՏԵՍԻԼ Ա.Ռ.Ա.ԶԻՆ

ՆԻՆՈ, յիտոյ ՕՍԵՓ

ՆԻՆՈ, ամենագեղեցիկ կին, տեղական շքեղ հագուստով,  
վերարկուով եւ հովանոցը ձեռին. յուզուած ներս է վա-  
զում դիմացի դռնից:

ՕԹԿԵՐԵՔ, մեռայ:

Ընկնելով ձախ կողմը բազմոցի վրայ, հովանոցը ձը-  
գում է իր կողքին:

ՄՈՍԵՅ, տեղական հագուստով \*), զլիարկը (Քուրաժկայ)  
ձեռին, մտնում է աջ դռնից:

ՀՐԱՅ, ի՞նչ խարար է: (Նինօն լուռ նայում է նրան:)  
Վա, օխնած հոքի, լիզուտ ի՞նչ էլաւ:

ՆԻՆՈ, հեկեկալով լաց է լինում:  
Է'սէնց էլ բան կու'լի՛, թէ մարթ իր տանէմէն  
չկանենայ դուս դնա՛:

Շարունակում է հեկեկալ:

ՄՈՍԵՅ, զլիարկը ձգելով աջ կողմի սեղանի վրայ:  
ՀՐԱՅ, ի՞նչ է, ի՞նչ է էլի: (Ծաղրելով նինօնին, որ  
լացի ձայնը աւելի է բարձրացնում:) ՀՐԱՅ, հրայ, հրայ...  
Տօ՛, մսա ու պրծի, էլի... Կու'լի՛ էլի ոաստ էկա՛ւ:

ՆԻՆՈ, լացը մեղմացնելով:

Սիմինայ նրա օրը... Վուր զիդենաս, թէ ի՞նչիք  
ասաւ, Աստուծ զիդենայ, մաս-մաս կ'օհիս: (Ազքերը

\*) Բոլոր գերասանները տեղական հագուստներով են,  
բացի Եւայն, որ հագնուած է եւրօպական ձեռվ:

սրբում է: էսատուրն էլ վիւր համկիրիս, էքուց էլօր  
ուվիր վիս բանիր կու դուս զայ:

## ՄՈՍԵՅ

Մուլափի, մուլափի հալա, նինօ ջան, մէ ասա,  
տեսնիմ ի՞նչս ասում:

## ՆԻՆՈ

Էլ ի՞նչ պիտի ասիմ, զեղինը պատոէ ու ինձ դէ-  
վեր տանէ... Զիս զիվի, ասում է, թէ ի՞նչ հանգն իմ  
սիլուում քիզ, կ'օսէ. զիշիրով, ասում է, քուն շունիմ  
ու ցերելը աշխարքը մութն է ինձ համա առանց  
քիզ, կ'օսէ. սրտիս կրակ է կպի ու էրվում է, կ'օսէ...  
է՛րվի նրա ջանը, խուզիմ նրա զլուխը, հըա... Վուշ  
էլ ճանչցի նրան:

Ցածր ճայնով լաց է լինում եւ աչքերը շուտ-շուտ  
սրբում է:

ՄՈՍԵՅ, որ ապշած նայում էր նինօին, ջարանում է:  
Վ.այ, 'ես\*') նրա... (Բարկացած ման զալով:) Էս սհա-  
թիս զնամ, ակաքնիրը ջարթ ու վշուր անիմ... Ամա  
չէ, խալին ի՞նչ կ'օսէ, ու նրա ջիգը վնաց պիտի  
ուտիմ: (Գլխարկը սեղանին խփելով:) Եա էս գդակը  
էլ ի՞նչ գդակ է զիխիս:

Շարունակում է բարկացած ման զալ:

\* ) Ե տառը մակակէտով նշանակած ('ե') պէտք է աբտա-  
սանել իսկ և իսկ այնպէս, ի՞նչպէս արտասանվում է յի  
վանկը՝ բառի միջում կամ վերջում, ձայնաւորից յետոյ.  
օրինակ՝ Մա յիս, Գա յի անէ, երկնա յին, Եսա յի, և այլն:

ՆԻՆՈ, վերարկուն հանելով, մօտենում է Մոսէսին:  
Լաւ է, Մոսէս ջան, գէթաղվա \*), սիրս մի շուռ  
տա. թաւաթ ջգրու էլ չկամ... Գանա առանց էտ  
չիս կանա նրա ջիպը հանիր...  
**ՄՈՍԵՍ**

Ուադ ըլի գլխէմէս:

ՆԻՆՈ, նորից լաց լինով:  
Քա, 'ես ինչ անիմ. Էն անիծածի ջիպը հերիք  
չէ, վուր հիմի դուն էլ իս ջգրվում:  
**ՄՈՍԵՍ**

Զէնդ, ձէնդ, ասում իմ. ջեր \*\*) պիտի քիզ մաս-  
մաս անին:

ՆԻՆՈ, լացը շարունակելով:  
'Ես ինչ միզ ունիմ, քա:  
Կատում է ձախ կողմը բազկաթոռի վրայ:  
**ՄՈՍԵՍ**

Էն միզն ունիս, վուր զուն նրանց տուն վուտդ  
իսկի չպիտի զրիլ էիր: Զիս զիզի, վուր էտ թա-  
վուրներուն էրես շանց տաս, զլիթա էլ կունստին...  
Ջեր աւտաս ներիք ջուրս ջեր վիզիտով է էլի էստի էն  
լիքի անսկամը:

ՆԻՆՈ

Բաս յօրէսի գէնը ասկականներէմէս էլ կտրվիմ, էլի:  
**ՄՈՍԵՍ**

Ա'սկական, անսկական... ինչի ասկական է... էտ

\*) Դ տառը թաւով նշանակած (՞) պէտք է արտասա-  
նել որպէս թուրքաց ջ կամ Վրացոց յ:

\*\*) Ջեր—դեռ, ջեր—անգամ:

ասկական է... նրա քուրը ինչ է քունը, ինչ, վուր  
խիլքիտ ծէրը զնում է նրա համա. քու բիձու աղի  
կնդայ բիձու ախչկայ թուռն է, ինչոր զահրումար  
է... նրանց զլուխն էլ անիծվի... Վոյ մէ... (Բոռնցը  
ցոյց տալով,) Վոյ մէ, ինչ անիմ... (Լուսամուտից դուրս  
նայելով:) Տիս, ախս, նա չէ:

ՆԻՆՈ

Նա կու'լի, բաս մվ կու'լի:  
**ՄՈՍԵՍ**

Վունց թէ նա կու'լի:  
ՆԻՆՈ

Բաս, ասաւ, վուր խանդիսան ակօշկէմէն գնւս  
մտիկ արա, վուր քիզ տեսնիմ, կ'օսէ, թէ չէ ճլէրք  
կու ննդնիմ, կ'օսէ: Ճլէրք ննդնի նրա ջանը:  
**ՄՈՍԵՍ**, չափից դուրս յուրուած, ուզում է լուսամուտից  
դուրս թոչել. յետոյ յետ քաշուելով:

Վա, գժվիլ իմ: (Կրկին մօտենում է լուսամուտին:) Եստի համեցէք, աղազադա, էստի համեցէք:

ՆԻՆՈ, վեր թոչելով տեղից:  
Ի՞նչ անում, գէնացվալէ:  
**ՄՈՍԵՍ**

Հիմացաւ. ինչոր խուռը գումիտումն է: (Ճեռանա-  
լով լուսամուտից, կանչում է:) Սէրզօ, Սէրզօ: (Մօտե-  
նալով դիմացի դուռն, կրկին կանչում է:) Սէրզօ... Էստի  
չէ, թային դնաց դուքանը... (Ցոյց տալով նինօին քիմի  
աջ կողմը:) Էտթէնը խօ չի ըլի, մէ ախս:

Դուրս է զնում ձախ դռնից. Նինօն աջու դրան  
կողմն է զնում: Կալում է Մոսէսի ձայնը՝ Սէր-  
զօ, Սէրզօ:

## ՏԵՍԻԼԻ

ՆԻՆՈ, ՍՊԱՍԱՒՈՐ

ՆԻՆՈ, հանդիպելով սպասաւորին, որ հասարակ չէրքէղ-  
կայով եւ սպիտակ սրբիչ ձեռին դուրս է զայխ աջ դռնից:

Մէրգօն գնաց, թէ էսաի է:

ՍՊԱՍԱՒՈՐ

Քնում է, ներքիվն է:

ՆԻՆՈ

Գնա, կանչէ, շնուտ արա:

ՍՊԱՍԱՒՈՐ

Էս սահաթիս, ախչիկ-պարուն:

Դուրս է վազում դիմացի դռնից:

## ՏԵՍԻԼ Գ

ՆԻՆՈ, ՍԵՐԳՈ, յետոյ ՄՈՍԽՍ

ՆԻՆՈ, մօտենալով ճախու դռանը:  
Էսաի է, էսաի, ապսլլեցի:

Մէրգօ, տուն վազելով դիմացի դռնից:

Էսաի իմ, էսաի:

Վազում է ճախու դռան կողմը. Նինօն յիտ է դառնում:

ՄՈՍԽՍ, վերապանալով, բռնում է Մէրգօին:

Մէրգօ ջան, Մէրգօ, (Տանելով նրան դէպի լուսամու-  
տը) էն տղին տեսնում իս, վուր էնդի փքրուտ բօլ-  
թա է ապլի:

## ՄԵՐԳՕ

Է՞ն, բօնժուռ աղաղաղէն: Մէ ջէր տեսիլ իմ էսաի:  
ՄՈՍԽՍ

Հա, հէնց նա: Գնա սահաթիս, ասա կան-  
չում իմ:

ՄԵՐԳՕ, վազելով:

Էս սահաթիս, աղա չան:  
ՄՈՍԽՍ

Զէ, մուլափ. ասա, վուր նինօն է կանչում:  
ՆԻՆՈ

Ինձ ուր իս խառնում:

ՄՈՍԽՍ, Մէրգօին:

Դուն գնա, 'ես քիզ ասում իմ, ու մէ կէտի էլ  
կուլի էտի, ըի. Ջանը պիտի դըլստիմ:  
ՆԻՆՈ

Ա'լս, Աստուձ:

## ՄԵՐԳՕ

Հէսաիկը բերիմ, աղա չան, վուր, է, նրա տրո-  
սած ջանին արժանի:

Դուրս է վազում դիմացի դռնից:

## ՏԵՍԻԼ Գ

ՆԻՆՈ, ՄՈՍԽՍ

ՆԻՆՈ, մեկուսի:

Էս ինչ բան արի 'ես: (Մոսէսին:) Ախար, ինչ իս  
անում, արա. ուզում իս խայտառակ ըլինք աշխըռումը:

**ՄՈՍԷՍ**

Քու լան չէ. 'ես գիղիմ ինչոր անում իմ:  
Զարացած ման է զալիս:  
Նինջ, մեկուսի:  
Ի՞նչ անիմ հիմի: (Մոսէսին:) Մոսէս ջան, գէթաղվա:  
**ՄՈՍԷՍ**  
Թող մէ, է... կնիկարմըտի ձեռնէմէն մէկը չէ  
խարաբ էլի ու երկուսը... (Գրպանում որոնելով:) Ի՞նչ  
արթի...  
Բարկացած դուրս է զնում աշ դռնից:

**ՏԵՍԻԼ Ե**

ՆԻՆՋ, մենակ:

Վամնց աղատիմ 'ես էն անխիլին... (Այս ու այն  
կողմն ընկնելով, զնում է լուսամուտից դուրս նայում:)  
Յօրէն Գիգօլին հիվը խօսում էս... Վ.մ.՝, գեղինը մըտ-  
նիմ. ուրախ-ուրախ վազում է դէսը... Գնամ ասիմ,  
վուր չհամարցակի տուն զա. ինչ կու'լի, կու'լի:  
Գնում է դէսի դիմացի դուռը:

**ՏԵՍԻԼ Զ**

ՆԻՆՋ, ՄՈՍԷՍ

ՄՈՍԷՍ, վերադառնալով, ձեռին թաշկինակ:  
Հըմա, ուր իս զնում, ի՞նչ կայ:  
Թաշկինակը պահում է:

ՆԻՆՋ, շուարուելով:

Վունչիչ. ի՞նչ շինիմ էստի:

**ՄՈՍԷՍ**

Զէ, համեցէք էստի կաց. պիտի դադանակը ձե-  
ռիս, քու առշիւը խօսեցնիմ էն աղաղաղին ու մէ  
լաւ քօթկիմ:

Բարկացած ման է զալիս:

## ՆԻՆՋ

Աբա, էտ ի՞նչ մարթութին է, ուզում իս բօղազ  
դուս կտրի իստանկ...

**ՄՈՍԷՍ**

Մարթութին... Այ, 'ես կու շանց տամ նրան  
մարթութինը:

## ՆԻՆՋ

Քու տամնը վուր շանիս էտ լանը, էլ օչով տիդ  
չկայ:

**ՄՈՍԷՍ**

Օ՞հ, զահլէս մի տանի:

Բարկացած դուրս է զնում ձախ դռնից:

**ՏԵՍԻԼ Ե**

ՆԻՆՋ, յետոյ ԵՒԱՅԼՆ

ՆԻՆՋ, մենակ:

Ի՞նչ ջուրը ննինիմ հիմի, աղատելու էլ ճար չկայ...  
Շփոթուած ման է զալիս. յանկարծ նկատելով բազ-  
մոցի վրայ իր հովանոցը, վերցնում է, մի կողմ  
զնում:

ԵՒՍՅՆ, գեղեցիկ երիտասարդ, նուրբ ճաշակով հագնուած եւրօպական ձեւով, ցիլինդրը ձեռին, պէնսնէն վզից կախած եւ ձեռնոցներով. մտնում է զիմացի դռնից՝ Շարժուածքը եւ խօսակցութիւնը միշտ եւրօպական քաղաքակրթուածքի երիտասարդի:

Կրկին բարեաւ ձեղ, աննման արարած...

Մեկնում է ձեռը:

#### ՆԻՆՈ

Գնացէք շուտով:

#### ԵՒՍՅՆ

Այս ի՞նչ է նշանակում. մի՞թէ դուք չհրաւիրեցիք ի՞նձ:

#### ՆԻՆՈ

Ես ձիդ ասում իմ՝ գնացէք շուտով:

#### ԵՒՍՅՆ

Օ՛հ, հասկանում եմ, հասկանում... Երեի դուք խղճացիք ի՞նձ, (նինօն շփոթվում է.) և այժմ ի՞նքներդ վախենում էք բաց անել ի՞նձ ձեր սիրտը: (Գլխարկը թողնելով ձախ կողմը, մօտենում է նինօին, որ կանգնած է բեմի աջ կողմը, եւ բռնում է նրա ձեռը:) Օ՛, մի լոէք, ի սէք Աստուծոյ մի լոէք... Այս երրորդ անդամն է, որ ես ի՞նձ ձգում եմ ձեր ոտների տակ և ամեն անդամ դուք արհամարհանօք և սառնասրտութեամբ էք վերաբերվում գէպի իմ՝ ջերմեռանդ սէրը... (Նինօն աշխատում է ազատել ձեռը:) Մի խօսք, մի խօսք, միմիայն մի խօսք, մի քաղցր խօսք... մի՝ այն՝ որ ընդունում էք իմ սէրը, և ես երջանիկ կը լինիմ յաւիտեան...

#### ՆԻՆՈ

Թողէք, թէ Աստուծ կու սիրիք:

Ազատում է ձեռը:

#### ԵՒՍՅՆ

Մի լարկանաք, տիկին... ինչո՞ւ էք բարկանում... Միթէ ես մեղաւոր եմ, որ սիրում եմ ձեղ. սիրում եմ անկեղծ, անվերջ, անսահման. թէ կերեղմանը դնէք ի՞նձ կենդանի, այն ժամանակ ևս շրթունքս չկադարիլ արտայայտել ձեղ իմ սէրը, զգացմունքը, հաւատարմութիւնը...

Ստէպ-ստէպ համբուրում է նինօի ձեռը:

ՆԻՆՈ, յետ ու յետ նայելով, խլում է ձեռը եւ բարկու, թեամբ:

Ի՞նչ իք անում, զժվիլ ի՞ք:

ԵՒՍՅՆ, շարունակելով:

Խղճացէք ի՞նձ, տիրուհի, աղաչում եմ ձեղ՝ խղճացէք... Ամբողջ կեանքս, կայիքս, հանգստաւթիւնս ձեղ եմ նուիրում, ձեղ համար պէտք է ապրիմ, ձեղ համար մեռանիմ... (Կրկին կամնում է համբուրել նինօի ձեռը. նախառնեափում Մոսէն աղաղակում է՝ Դէ, արի շուտ: ) Ա՛յ, չօրտո վազմի...

Ճռանալով նինօից, անցնում է բեմի ձախ կողմը եւ զիմացիք վեր առնում. զիմացի գնից մտնում է Մոսէսը:

—————

## ՏԵՍԻԼ Ը

ՆՐԱՆՔ, ՄՈՍԵՍ

ԵԿԱՅՆ, ՄՈՍԵՍԻՆ:

Պատիւ ունիմ... (Մեկնելով ձեռը:) Բարեաւ ձեղ,  
պարոն. իմ խորին յարգանքներս...

ՄՈՍԵՍ, ակամայ տալով ձեռը:

Համեցէք, համեցէք, պարոն. քիզ մօդ խիստ  
հարկաւուր բան ունիմ... (Հրաւիրելով դէպի բազմոցը:) Համեցէք նստի... (Նինօին, որ կամնում էր դուրս  
գնալ:) Մաւլափ, նինօ, ուր իս գնում, էս պատւական  
մարթը շնուր է բերի:

ԵԿԱՅՆ

Մեծ պատիւ էր անում ինձ, պարոն, չնորհակալ  
եմ... չըամայեցէք՝ ինչ էր ցանկանում. տիկինը  
ոչինչ չէ կամենում ասել:

ՄՈՍԵՍ

Էս սահաթիս, պարոն: (Գնում է, դուրս է նայում  
դիմացի դռնից եւ առանձին:) Արա, թէ զայ:

Եւայն զլսարկը վայր զնելով, նստում է բեմի ճախ  
կողմը եւ վերցնում է սեղանի վրայ դրած ալբօմը:  
Նինօ, առանձին:

Ո՞վ քաղցր Աստուծաձին, Դուն ըլիս միր քօմագը:  
ՄՈՍԵՍ, անցնելով բեմի աջ կողմը, Նինօին, ցածր:  
Ինձ կու սիրիս, ինչըու չասիմ, չժաժ զաս էս զանց:  
Նինօ, նոյնպէս ցածր:

Չալիշ արի, չխայտառակիս քու զլուխը, իմն էլ  
հիպը:

ԵԿԱՅՆ, որ Թերթելով ալբօմը, աչկի տակով նայում էր  
Նինօին:

Ի՞նչ են խօսում:  
Դիմացի դռնից մտնում են՝ Ղաղօն եւ նրան հե-  
տեւելով Սէրգօն, ձեռին այրելու մի երկար փայտ:

ՏԵՍԻԼ Թ

ՆՐԱՆՔ, ՂԱՂՕ, ՍԷՐԳՕ

ՂԱՂՕ

Հըա, ինչ խարար է:  
ՄՈՍԵՍ, խառնուած:

Վունչիչ, ասում էր էլախա Աէրգօն, թէ չուզունի  
պլիտի համա լաւ փէտ իմ առի, կ'օսէ, ու նմուշը  
բերիլ է, վուր տեսնիմ... (Սէրգօին:) Լան է, տան...  
էլ մի ուշանա. դուքանը միկիլ է:

Ղաղօն նայելով Սէրգօին, գժգոհութեամբ շարժում  
է զլուխը:

ԵԿԱՅՆ, առանձին:

Այստեղ ինչ որ անցնում է:

Սիրով նայում է Նինօին:

ՍԷՐԳՕ, առանձին:

Ափուս իմ ամագ:

Փայտը ձեռին դուրս է գնում դիմացի դռնից:

—∞—

## ՏԵՍԻԼ Ժ

ՆԲԱՆՔ, առանց ՍԵՐԳՈՒ

ՆԻՆՈ, առանձին:

Տէրը քի բարի տայ, Ղաղօ, վրայ հասար: (Ղաղօին:) Բարով, Ղաղօ... Համեցէք:

Խնը նստում է աջ կողմը:  
ՂԱՂՕ

Բարով, բարի գուն ձիղ... (Եւայլն պէսսնէով  
նայում է Ղաղօին եւ իսկոյն շարունակում է զննել ալքո-  
մը: Մոսէսին, ցածր:) Էս ո՞վ է:

ՄՈՍԷՍ, նոյնպէս ցածր:

ՆԻՆՈԻ ասկականի ասկական է:

Եւայլն պատահում է ալքօմում Նինոի պատկերին  
եւ զմալուած սոտէպ-ստէպ ու զաղսագողի հա-  
մեմատում է պատկերը Նինոի հետ:

ՂԱՂՕ, շարունակելով, ցածր:

Անումը:

ՄՈՍԷՍ, նոյնպէս:

Եւայլն:

ՂԱՂՕ, նոյնպէս:

Ի՞նչ:

ՄՈՍԷՍ, նոյնպէս:

Եւայլն, էլի, զա:

ՂԱՂՕ, նոյնպէս:

Իմացայ, ամա Եւայլն էլ անում կուլի... (Դաս-  
նալով Նինոին, բարձր:) Արա, Էս իմ թաղարիկը պըս-

Ճայ. (Մոսէսին:) գուր էլ ձիր պատրաստութինը տե-  
սմը, թէ չէ:

## ՄՈՍԷՍ

Վայ քու տղիս տղայ... Մտիկ, է, իստակ մտկէ-  
մէս էլաւ, էսօր իս իմ հիրթին է:

ՂԱՂՕ

Վայ, բան. թէ էն օրն էս գիշիրութին մեճրեցիր  
գիփունանցը:

## ՄՈՍԷՍ

Հա, հա... (Նինոին:) Արա, Նինո, գուն իս, աւ-  
տաս, իսկի էլ չս փիքը արի:

ՆԻՆՈ

Փիքը էլ իմ արի ու կատարիլ էլ. հենց էտու  
համա էի հիմի գուսը... Ամեն բան հաղիր է ու չեր  
իս վաղ է. հիմիսկ էւէտ սարքիլ տամ:

ՂԱՂՕ

Տօ, էլ ինչ վաղ է. յօրէս լուսնիակը գուս գու  
քայ: Ինչու քէշէքն ու խալիշէքը դէվէր կու տանին  
բախչէն, գօնաղնիրն էլ մօդ կուլին:

ՄՈՍԷՍ, յանկարծ ուրախանալով եւ ծեռը ճակատին տա-  
նելով, մեկուսի:

Մու... այ բախտ... (Նինոին:) Արա, Նինո, գնա,  
հէնց ապրիս, հրամաէն չուստ դէվէր տանին, ինչ  
հարկաւուր է:

ՆԻՆՈ, վիր կենալով:

Էս սահաթիս. գուն հմնգիստ կաց, ամեն բան  
կարքին կուլի:

## ՄՈՍԷՍ

Իժնւմ, Սէրզօին ասիլ իս, վուր էս գիշիր էսափ  
ըլի:

નુહનો

Ասիլ իմ, բաս. մենակ բջերանց արոլ խօ չէինք  
միա:

Վերցնելով հովանոցը, զնում է դէպի ճախ զուռը.  
Եւայլն այս միջոցին սիրավիր հայեացքով հե-  
տեւում է նրան եւ, երբ Նինօն զուրս է զնում,  
ծիռը սրտին է տանում եւ անձայն խորը հոգ-  
ւոց հանում:

ՏԵՍԱԿԱՆ ՓԱ

ՆՐԱՆՔ, առանց ՆԻԿՈՒ

### ՄՈՍԵՅ, Ղաղօին:

Բայս լաւ քէփի ումիկ ունիս. սազանդար էլ խօ կույի՞:

quarto

Բան, բան, եաւանգուլը իր դաստով: Կու՛լի Ար-  
տէմին \*) էլ վրայ հասնի իր զուանով ու զուգուկով.  
խոստացաւ: Ուրիշ տիկ խօսք ունէ տված, Էնդանց  
դէմուդէմը միզ մօդ զու քայլ:

45

ξῶ, ἔπειτα οὐκέτι οὐκέτι πολλούτες: (Ἑταῖροι) Φωτιστόν  
θεταῖρον, αὐτὸν δέ τις θεός φέρει μοναχόν, ζητοῦσαν  
γάρ τι... (Ἑταῖρον ποτήρι τοῦ κανθάνουτος:) Φέρει  
μοναχόν θεόντας θεάσαντας.

\*) Խօսքը հանգուցեալ Արտէմ Բօտինեանցի մասին է,  
որ երկերի գուլունաւ ու մանաւանու ոռութուկ ածող էր:

մնում խօսելու. Էս գիշերվան հօնազուտքը թինը, դուն  
էլ տեսար, խտակ մոռայիլ էի, թէ չէ քիզ էսօր չէի  
նկացնի... Թարջիմլումը 'ես քիզ խնդրում իմ՝ հրա-  
մանքդ էլ շնուր բերիս էս գիշեր իմ բախչէն, մէտի  
քէփ անինք. ումիկ ունիմ, լաւ քէփ շանց տամ քիզ...  
էնդի կու խօսինք միը խօսելուն:  
ԵՒԱՅՆ

Միթէ... (Մեկուսի:) Ահա պատուական մարդ:  
(Մոսէսին:) Զեր քաղաքավարութիւնը, պատուելի, ինձ  
հիացնում է... Մեծաւ ուրախութեամբ, մեծաւ ուրա-  
խութեամբ, պարոն, ընդունում եմ ձեր հրատէրը,  
միայն այն պայմանաւ, որ դուք էլ բարեհաճէք շնորհ  
բերել մեր տուն, մեր այբումն էլ քէփ անէք. 'Ես  
ձեզ կը հանդիպեմ իսկ և իսկ առ լաւ փարիզիէն:  
Քոյքս շատ ուրախ կը լինի ձեզ հետ ծանօթանալու...

Ղամբեկ Համբեկ Համբեկ Համբեկ  
Համբեկ Համբեկ Համբեկ

Իհարկէ... Վերջապէս, գոնէ այս անդամ մենք  
կ'արժանանանք ձեզ տեսնելու մեզ մօտ... (Մատնա-  
ցոյց անելով Պալօին:) Եթէ պարոնը ձեր բարեկամն  
է, ևնորեմ միասին շնորհ բերէք:

**ՄՈՍԻՍ**  
Վանց թէ բարեկամ. Դապօն իմ ախալէքն է:  
Ենուան.

Միթէ... (Կաղօին:) Պարոն Զարօ, շատ ուրախ եմ... (Մեկնելով ճառը.) Եւայլն... Պարոն Մոսէսի եղամոր իմ եղբայրն է:

bnu81v



**ՄՈՍԷՍ,** առանձին:

Էտ է, վուր աւտացի:

**ՂԱՂԹ,** տալով ձեռը Եւայլնին:

Ես էլ ուրախ իմ, պարուն. **Մոսէսի** բարեկամը,  
իմ բարեկամն է:

ԵՒԱՅԻՆ, Ղաղօին:

Ուրեմն յոյս ունիմ, որ ձեզ եղած հետ միասին  
շնորհ կը բերեք ինձ մօտ:

**ՂԱՂԹ**

Վա, **Մոսէսի** հիդ թէգուղ ջանդամը կ'էհամ:

ԵՒԱՅԻՆ

Ես ձեզ երկուսիդ էլ, պարոններ, այնպիսի սիրա-  
լիք ընդունելութիւն ցոյց տամ, որ ինձանից բաւա-  
կան մնաք:

**ՄՈՍԷՍ,** Եւայլնին:

Միք խաթիր ինչի՞ իս նիդանում, պարուն...  
ԵՒԱՅԻՆ

Պատրաստ եմ հաստատել ձեզ իմ՝ բարեկամու-  
թիւնը, սէրը, մտերմութիւնը... և այլն: (Ծոցից յուշա-  
տեսրը հանելով:) Ներողութիւն, ես խսկոյն:

Նստելով ձախ կողմի սեղանի մօտ, յուշատեսրի  
մէջ մատիտով զրում է:

**ՂԱՂԹ,** Մոսէսին, ցածր:

Տօ, էս ինչ ուրիշ հանդն է խօսում. գէթաղվա,  
ձեռնէմէտ շդուս թողնիս, կու ծիծաղինք:

**ՄՈՍԷՍ,** նոյնպէս:

Ուփրօ լաւ թամաշի ումիկ ունեցի: (Եւայլնին:) Բաս  
ումիկ ունենամ, վուր անպատճառ զու քաս:

ԵՒԱՅԻՆ

Հաւատացմած կացէք, պարոն, որ իմ խօսքս խօսք  
է... (Յուշատեսրը ցոյց տալով:) Ահա, հէնց զրա հա-  
մար էլ այս ըստէիս նշանակեցի այստեղ, որ ես ձեզ  
շուտով ընդունելու եմ... Իրաւ է, կան մարդիկ, որ  
չին վնահատում իրանց խօսքի սրբութիւնը, բայց  
ես, ես... այլ եմ... Իմ կարծիքով աւելի լաւ է մարդ  
մեռանի, քանի թէ տուած խօսքը չկատարէ... և այլն:  
Յուշատեսրը ծոցն է դնում:

**ՂԱՂԹ,** Մոսէսին, ցածր:

Մուլափի, Մոսէս չան, սրան խօ աւելի անում չին  
կպցրի, վուր դիփ 'եւ այլն է ասում:

ՄՈՍԷՍ, նոյնպէս:

Խօսեցրու, գուն ինքդ կու իմանաս: (Եւայլնին:)  
Պարուն Եւայլն, անմըթի իմ, պիտի զնամ, էնթէնը  
մտիկ անիմ: (Կիսարկը վերցնելով:) Էս սահաթիս զա-  
լիս իմ...

ԵՒԱՅԻՆ

Խնդրեմ, պարոն:

Մոսէսը դուրս է գնում ձախ դռնից:

ՏԵՍԻԼ ԺԲ

ԵՒԱՅԻՆ, ՂԱՂԹ

**ՂԱՂԹ,** ինքն իրան:

Եւայլն...

ԵՒԱՅԻՆ

Միթէ դուք չէք հաւանում Եւայլն բառը, այս

սուրբ բարը, որ պարունակում է իւր մէջ բաղում խօսքեր, մաքեր, գաղափարներ, զգացմունքներ... և այլն:

Ուշագրութիւն դարձնելով պատից կախած մէկ նկարի, գնում, մօտից զննում է:

ՂԱՂՕ, առանձին:

Վայ քու տղիս աղայ, իծաներով լիքն է էլի:  
(Եւայլնին:) Ղուրթ իս հրամանք անում, պարուն, լաւ խօսկ է. ամա մէ քիշ միր քախկումը էտ հանգի իօսկը չէ անց կենում, ինչ անիս: (Հրաւիրելով նստել:) Համեցէք:

Նստում են: Եւայլն ամբողջ ժամանակ ձեւանում է:

ԵԽԱՅԼՆ

0՝, քաղաքը... Այս քաղաքը գեռ շատ հեռու է իսկական լուսաւորութիւնից. երկար տարիներ են հարկաւոր, պարոն, մեր ժողովուրդը զարդացնելու համար:

ՂԱՂՕ

Ղուրթ իս հրամանք անում, պարուն Եւայլն, ուրիշ խալս է միր խալսը. մինք քէփն ու զօղն անց էլ վունչիշ շինք զիդի:

ԵԽԱՅԼՆ

Քէփը ո՞վ չի սիրի. քէփը կեանք է, պարոն:

ՂԱՂՕ

Բաս խաղի անգաճ զնիլ էլ սիրում կուլիս, էլ ինչ ասիլ գ'ուզէ:

ԵԽԱՅԼՆ

Կամենում էք ասել՝ երգ. այսինքն սրտի զգացմունքի արտայայտութիւն: 0՝, ինչպէս կարելի է

երդ չսիրել. այն ժողովուրդը ժողովուրդ չէ, որ երգ չունի, ասաց մեծն զիլէք: Ես ինքս երգող եմ, պարոն:

ՂԱՂՕ

Բաս հրամանքը լաւ չքամթա էլ կու գիգենաս:

ԵԽԱՅԼՆ

Տեղական երգերի հետ ծանօթ չեմ, պարոն. ի մանկութենէ մեր երկրից ես դուրսն եմ մեծացել:

ՂԱՂՕ

Հրամանքը վուրդանցի իր:

ԵԽԱՅԼՆ

Ես, ես... հայ եմ և մնացեալն... և այլն:

ՂԱՂՕ, աշխատում է ծիծաղը զսպել:

Մօսկով էլի՛լ իր հրամանքդ:

ԵԽԱՅԼՆ

Այն, Մօսկով, Պետերբուրգ, արտասահման...

ՂԱՂՕ

Էտ ինչ երգիր է արտասահմանը:

ԵԽԱՅԼՆ

Եւրոպայ, Եւրոպայ, պատուելի. մի՛թէ չգիտէք...  
(Մեկուսի:) 0՝, տղիտառթիւն, տղիտութիւն... (Արձակելով ծիփ քուլաներ:) Քէշ իհեռուան:

ՂԱՂՕ

Վունց չիմ զիդի. շատ վուխտ իր կացի էնդէ:

ԵԽԱՅԼՆ

Այն, բաւական երկար ժամանակ... Տարիներ, պարոն, տարիներ:

ՂԱՂՕ

Էտ իս խէլի փուղ կու նստէր:

## ԵՒԱՅԼՆ

Իհարկէ առանց փողի չէր լինի, բայց երբ փող կայ, ամօթ է, որ մարդ խնայէ իր լուսաւորութեան և զուարձութեան համար... և այլն:

Ոտք ոտի վրայ դրած, ծնկան վրայ յարդի մի փըշ-րանք նկատելով, ցրտիկով (միջի մատի հարուած) հեռացնում է:

## ՂԱՂՕ

Բակլէն էժան է էնդի, թէ լօրին:

## ԵՒԱՅԼՆ

Ես վաճառականութեամբ չեմ պարապում, պա-րոն, գիտացէք:

## ՂԱՂՕ

Բէղամաղ մի՛ ըլի, գէթաղլա, էնէնց հարցնում իմ... Զէթիսիլի ու ջօնջօլ լսո կայ էնդի:

## ԵՒԱՅԼՆ

Ինչե՞ր էր հարցնում, պարոն. դուք ինձ մւմ տեղ էր ընդունում... (Տեղից վեր կենալով:) Թի՛, մօվի թօմ, մօվի ժաննոր...

Դադօն, առանձին, գէմքը ծամածում է:

## ՏԵՍԻԼ ՃԳ

## ՆՐԱՆՔ, ՄՈՍԷՍ

ՄՈՍԷՍ, ներս մտնելով ձախ դռնից:

Աբա, Ղաղօ ջան, հիմի դուն գիդիս. էնդի գիփ հաղիք է:

## ՂԱՂՕ, վեր կենալով:

Դուն արխային կաց. վունչիշ չի մտէս ննդնի:

## ՄՈՍԷՍ

Հրավանքի էլ, պարոն ՚Եւայլն, մէ էրկու սահաթ-վան էդնէն շնուր կու բերիս քուշի գոնէմէն ու գէ-մուղէմը բախչէն համեցէք կ'օնիս: Ումիկ ունիմ, լաւ քէփ շանց տամ քիզ. Էսօր իմ րիգիս-պուրին է:

## ԵՒԱՅԼՆ

Ա՛, րիգիս-պուրի, այսինքն՝ հերթա-հաց կամ հեր-թա-ճաշ... Օ՛, գիտեմ, գիտեմ. ալա-վէրդի, եախ-շի-օլ... և այլն... ես այդ ամենը գիտեմ:

## ՄՈՍԷՍ

Բաս, բաս... Դուն համեցէք. հէստի քէփ շանց տամ, ասում իմ, վուր քու էլած օրումն էլ չիս ըլի տեսի:

## ԵՒԱՅԼՆ

Անպատճառ, անպատճառ. ձեզ համար ես պատ-րաստ եմ՝ ուրախութեամբ մտնել վաս կըակը կամ ալեկոծեալ ծովը: (Առնելով ձեռը:) Ցաեսութին:

Գնում է գէտի Դադօն:

## ՄՈՍԷՍ, առանձին:

Կըակն ու ծովը կու շանց տամ ՚ես քիզ էս գիշիլ:

## ԵՒԱՅԼՆ, Դադօն:

Մնաք բարեաւ: (Նոյնպէս առնում է ձեռը. յիսոյ ընդհանուր ողջոյն տալով:) Աղիկօ, նշ, օ րըվուսան, պարոններ... և այլն:

Դուքս է գնում դիմացի դռնից:

## ՏԵՍԻԼ ԺԴ

## ՂԱՂՕ, ՄՈՍԷՍ

ՂԱՂՕ, փրթկում է, յետոյ ծիծաղելով:  
 Հսէնց էլ մարթ կուլ'լի... Ի՞նչ միլլէթի մարթ  
 տախ, տեսիլ իմ, Մոսէս, ամա էս հանգին չէ ուստ  
 էկի, վունց էլ ՚Եւայլ անումով օմքին տեսի:  
 ՄՈՍԷՍ

Մի վախենա, խիլքով ու խասիաթով էտ հանգի  
 ՚Եւայլնիր շատ կան քախկումը:

## ՂԱՂՕ

Համ ուսում առած ու համ էլ ծալ-պակաս:

## ՄՈՍԷՍ

Այ, խոռվ կենայ ինձ դրա ուսումը... Ի՞նչ զլսիս  
 իմ տալի էն ուսումը, վուր մարթ ուրիշի կնդայ  
 վրայ աճկ ունենայ, Էն էլ իր ասկականի վրայ...  
 (Վաղոն զարմանք է արտայայտում:) Հօր թողած փու-  
 ղիրը շամ, ինքը սիրուն ու կոխտա, վուրդի ասիս,  
 թրէվ է էկի... Փրանգստնէմէն յօրէն նուր է չնուր  
 ըերի... Իր ուսումը էնդանցի զավախաներումը կուլի  
 թամամ արի ու էլի սատանէն զիդէ վուրդի:

## ՂԱՂՕ

Մալիկ, Է. լիդին անգաճ դնիս, կ'օսիս՝ խիլքի  
 կոլօփ է զբուստ:

## ՄՈՍԷՍ

Է՞ն, թութի-կուշն էլ է շատ բան ասում, ինչ  
 անիմ:

## ՂԱՂՕ

Ամա կու ծիծաղինք էս զիշիր, հա. արտչի կու  
 չինին միր տղէրըլ: Ճեր մէ դարփա 'ևս ոլըլեցրի  
 աղաղաղին:

## ՄՈՍԷՍ

Բանը մենակ ծիծաղի վրայ չէ, Ղաղօ ջան. քի-  
 մէն ի՞նչ թարցնիմ, եադ խօմ չիս... ելախտ էն փէտը  
 խօմ տեսար, վուր Սէրգօն տուն էրի. Աստուծ զի-  
 դենայ, ուզում էի բան-հոքի անի էն անիծածին,  
 ամա վուր տուն էկար, մէրաշ սառած մնացի:

## ՂԱՂՕ

՚Ես էլ մաշուր արի, Մոսէս, ամա էլ վունչիշ  
 շասի... էնդուր էլ Սէրգօն մէռաւ, կտրվեցաւ ու  
 շասաւ ինձ էստի տուն գալիս, թէ ինչի՞ է բերում  
 էն փէտը... Մէ ասա՝ ի՞նչ խարար է:

## ՄՈՍԷՍ

Էլ ինչ խարար է, ախսէր, անումս բէդնամ էլաւ...  
 էլ ճանիփայ չէ տալի էտ աննամուսը քու հարսին.  
 վուրդի ուստ է զալի, ինչ բէաբուռ խօսկ ասիս,  
 նրան է ասում:

## ՂԱՂՕ

Մուլանի հալա... վիս ախչիկ չէ նինօն. նրան ի՞նչ  
 պէթ է արի:

## ՄՈՍԷՍ

Տօ, փսութինով կի չէ. ասում է՝ սիրում իմ քիզ,  
 կ'օսէ, ու էլ ձեռը չէ վիկանում:

## ՂԱՂՕ

Ղուրթ իս ասում, Մոսէս:

**ՄՈՍՔՍ**

Ի՞նչ հանարի բան է:

**ՂԱՂՕ**

Տօ, տօ, տօ, մէ ինձ կ'օսէիր, է... չարսիս նա  
վարդանց է ճանշնում:

**ՄՈՍՔՍ**

Նրա հիռու ասկական է. թէ ասի էլախտ...

**ՂԱՂՕ**

Վայ, ՚ես նրա... Սու, սու, Մոսէս ջան... Խօ զու  
քայ էս գիշիր, նրա ջիպը իմ շնորին. հէստի բան  
անիմ, վուր իր օրումն էլ չմաէն ննդնի:

**ՄՈՍՔՍ**

Քի գրուստն ասիմ, ՚ես էլ մտկումս էտ գրի, վուր  
էս գիշիրութին մեծրեցի. ասի՝ թէ տանը վուր ծե-  
ծիմ, վայ թէ վիս անում վիր ըլի, ու էս գիշիր մէ  
ուրիշ բան մահանա կ'օնիմ, ասի, ու խալիսի մօդ  
ջարթ ու փշուր կ'օնիմ ակոքնիրը:

**ՂԱՂՕ**

Ջարթ ու փշուր... վուրն ինձ թամաշա արա.  
Միս թէ ինչ հալն իմ զցում ՚ես նրա կոկած ու  
տրոսած ջանը. մէ գնամ հալա, կարք ու սարքին  
մտիկ անիմ:

**ՄՈՍՔՍ**

Հա, չմւատ արա, Ղաղօ ջան:

**ՂԱՂՕ**

Դուն քէփդ քօք պահէ:

Գուրս է գնում ձախ դռնից:

**ՏԵՍԻԼ ԺԵ**

**ՄՈՍՔՍ, մենակ:**

Կինաղամ ինչ էի անում, է... գրուստ էր ասում  
նինօն, ինչ ասում էր... Ղուրթ վուր խանդախան  
կնիկարմատն է խելօք աղամարթու վրայ... չըմ...  
(Աջու բռունցը կրծքին խփելով) Մնալափ, պարուն  
՚եւայլն, հէստի բան բերիմ գլխիտ, վուր զուրս դուն  
պատւիրեցիր:

Գուրս է գնում ձախ դռնից. վարագոյրը իշնում է:

Վերջ սիսակն սրբութեան

## ԱՐԱՐՈՒՀԱԾ ԵՐԿՐՈՌՅԻ

Բեմը ներկայացնում է գեղեցիկ պարտէզ, որի ետևից, խորքում, Մոսէսի երկու յարկանի տունը: Երկնքում փայլում է լուսինը: Պարտէզում, դէպի ձախ, ծաղիկների մէջ փոած է քէշաներով ու մութաքաներով զուքած մեծ դորդ, որի վրայ ձգած է կանանչ տերհներով և ծաղկէ փնջերով զարդարած լնթբիթի ճօխ սփոց: Աջ կողմը ևս ծաղիկներ: Խորքում՝ տան առջե, գետնի վրայ ընկած է մի փայտէ դատարկ մեծ տակառ (շաքարի բօչկայ): Բեմը լուսաւորած է գոյնզգոյն թղթէ վառ լապտերներով և սփոցի վրայ դարսած ճրագներով: Տան վերի յարկը նմանապէս լուսաւորած է:

## ՏԵՍԻԼ Ա. Ո. Ա. Զ. Ի. Ն

ԴԱՊՕ, սազանդար ԵԱԼԻԱՆԳՈՒԼ, իր խմբով \*) եւ բաղմանիւ ՀԻՒԵԲ, ծալապատիկ նստած սփոցի շուրջը, ընթրում են, ՄՈՍԷՍ, ոտի վրայ կանգնած, հիւրասիրուս

\*) Եաւանգուլու խումբը, առաջին ներկայացման ժամանակ, կազմում էին, ըստ սովորութեան, չորս անձինք: Գլխաւորը ինքը Եաւանգուլն էր—թառ ածող և երգիչ Երկրորդը՝ ճիանուր (քամանչայ) ածող—Եօվանէ Վարդանեանն էր. մնացած երկուսին անուանում էին՝ դայիրայ ածողին—Պապուչի, իսկ գիմպլիպիտօ ածողին—Ճիղօ:

է, ՍէրԳՕ եւ երկու ՍՊԱՍՍԻՈՒՄ \*) ծառայում են: Միքանի հիւրեր պլսարկներով են, միւսները առանց զըլիսարկի: Վարագոյրը բացուելիս սպասաւորները վերջացնում են հիւրերի սպասներով զիսինելը մաքուրներով և բանեցրածները զուրս են տանում աչ կողմից. նոյն կողմից զուրս է զնում եւ Սէրգօն, նախապէս շարժուածքով հրահանգներ ստանալով Մոսէսից:

ԵԱԼԻԱՆԳՈՒԼ, Թառը ձեռին, սաղի ներդաշնակցութեամբ երգում է:

«Մէ խօսկ ունիմ իլթիմազով,  
անգամ արա, ով աճկի-լուս.  
Սըրտառմը ինթիզար ունիմ,  
քու տիսըն բարով, աճկի-լուս.  
Աջամբ քիզ ինչ գէթ իմ արի՝  
կենում իս խըռով, աճկի-լուս.  
Աշխարս աշխարով կըշտացաւ,  
ես քիզանից սով, աճկի-լուս:» Եւն:

ՄԱՅԱԺ-ՆՈՎԱՅ

Միհաջեռ այս երգը շարուռակվում է:

ԱՌԱՋԻՆ ՀԻՒՐ, բաժակը ձեռին:  
Հա-ջան, հա-ջան, Եաւանգուլ ջան: (Դաղօին:) Թա-  
մադա ջան, դուն ինձ զաստուր տվիր՝ մէ կինաց

\*) Մինը՝ առաջին արարուածի սպասաւորն է, զուգուած շքեղ չէրքէզկայով և արծաթապատ գաշոյնով. միւսը—Փըրակով և սպիտակ ձեռնոցներով:

ասիմ... էս էլ Աստուծ սաղ պահէ՝ օվոր ումը կու սիրէ: (Ղաղօն ու Սոսէսը նայում են միմնանց:) Էս խաղին էս կու սաղ զայ: (Երկրորդ հիւրին:) Ալա-վէրդի: Երկրորդ չիկր

Եախշի-օյ: (Մինչեռ առաջին հիւրը խմում է, սա վերջնելով բաժակը:) Էս էլ՝ էրած ու խորված սիրեկնի կինացը: (Երրորդ հիւրին:) Ալա-վէրդին քի մօդ իմ: Երրորդ չիկր

Եախշի-օլ: (Բաժակը ձեռին, չորրորդին:) Ալա-վէրդի: ՀՈՐՌՈՐԴ չիկր

Եախշի-օլ:

Խմում են: Այսպէս շարունակում են եւ մնացած հիւրերը, մէկը միւսին շարժուածքով արտայայտելով իրանց ալա-վէրդի եախշի-օլը: Երգի վերջանալու ժամանակ աջ կողմից Սէրգօն զամբիւդով բերում է շիշերով գինի, դարսում է նրանց սփոռոյի վրայ եւ դատարկները հաւաքում զամբիւդում: Այս միջոցին վերոյիշեալ սպասաւորները նոյն կողմից բերում են սկուտեղների վրայ դրած երկու շամփուր խորոված:

ՄՈՍՔՍ, սպասաւորներին ցոյց տալով այն կողմը, ուր նստած է առաջին հիւրը:

Էնթէնը թափաղա արէք: (Նոյն կողմը:) Արա, տղէրը, մտիկ արէք՝ ի՞նչ սուկիք է: ԱՌԱՋԻՆ չիկր

Զան, ջան, խաղէին: (Չէրքէզկաւոր սպասաւորին:) Գուն մուլափի: (Միւս սպասաւորին, ցոյց տալով երրորդ հիւրին:) Էտ տար էն սիրուն տղին թալազա արա, մշկուլ վուր նստած է: (Երրորդ հիւրին:) Արա, Սանդրօ

ջան, մէ ճակատդ բաց արա. լ'նչ իս էտ պաճոյ քինթդ մէ զաղ վէր թողի. Էտ խորովածը մէ քու դայիդի թայգով շինէ, թէ ախպէր իս: (Եր մօտ կանգնած սպասաւորին:) Բի էսափի: (Առնում է սկուտեղը եւ թրաշելով խորովածը, զիմում է Ղաղօնին:) Արա, թամալա, էստուրն ի՞նչ իս ասում. մտիկ, է, հէնց զիգենաս կարմիր եակովթնիք ըլի կաթկթում:

Միւնոյն ժամանակ երրորդ հիւրը թրաշում է իր ձեռի խորովածը առանց կտորները հեռացնելու, այնպէս որ այդ կտորները կազմում են մի տեսակ փունչ, որ շամփուրը կոթից բռնած նա առաջարկում է աջ ու ձախ. հասնողները ձեռով պոկում են խորովածի կտորները եւ ուտում:

ՂԱԳՕ, նոյն միջոցին, սպասախանելով առաջին հիւրին: ՕՇՆ, քու հոքուն մեսնիմ, Վասօ ջան: (Առնում է խորովածի կտորը, լոշի մէջ փաթաթում եւ ծամելով:) ԸՇՆ, ըՇՆ... Մէ էտթէնն էլ թափաղա արա: (Աեր կենալով տեղից:) Էտ սահաթս էւէտ զալիս իմ: (Դիմելով Մոսէսին:) Մոսէս, էսափի արի: (Մոսէսի հետ առաջ է զալիս:) Մէ հոքեուն ի՞նչ էլաւ. լ'նչի ուշացաւ:

Մեղմ կերպով ածում են մազը. խորովածը մատուցանում են:

ՄՈՍՔՍ

Դու քայ, մի վախենա:

ՂԱԳՕ

Դիղիս լ'նչ վիքը արի, Մոսէս ջան... Տղէրը մէ քիշ վուր տաքնան, կ'օսիմ՝ զնանք խէյվնի կուռը. հառողի մօդ վուր մօդ կ'էհանք, մէ իմքին շառ կու զցիմ՝ ես էն աննամուսին ու կու բլնցիմ դէմուգէմը հառողը:

**ՄՈՍԵՍ**

Էտ չելաւ, Ղաղօ ջան... Տպրած սրախս վրայ էլ հիւու շփիքը արի էլախսա... Պիտի էնէնց ժաժ զանք, վուր օշավիչն օշով չիմանայ... Քի գրուստն ասիմ՝ խիստ փոշիվան իմ, վուր մեճքեցի ՚ես էն լիրի անսկամին, ամա հիմի էլ նա փախդա, վունցոր ըլի պիտի եօլա տանինք, դօնաղներուն էրես պահինք... Իմ սիրալ խօ կոտրած է ու կոտրած. էնէնց բան բանինք, վուր էս քէվրքնթէներէմէն չդուս գայ նրանցը... Հիմի, Ղաղօ ջան, էսէնց գարսինք՝ դիփունանցը վուր կու դէվէր տանիս խէլվանը, ՚ես էն լպստածին թաքուն զրադ կու քաշիմ ու դէմուգէմը կ'օսիմ իրան, վուր նինօիմէն ձեռը վիկալնէ, թէ չէ, դուրթ վուր մաս-մաս կ'օնիմ ՚ես նրան:

Սէրգօն դատարկ շիշերով զամբիւղը տալիս է ֆրակաւոր սպասաւորին, որ դուրս է տանում աչկողմից:

**ՂԱՂՕ**

Վունցոր քու քէվին է, Մոսէս ջան, էնէնց կու ժաժ զամ:

**ՄՈՍԵՍ**

Տեսնինք, Աստուծ վունց է վրայ բերում:

Այս խօսակցութեան ժամանակ, մինչգետ սալը մեղմ ձայնով շարունակվում է, հիւրերը երթեմն երթեմն զանազան քէֆի խօսքեր են ասում մի-մեանց՝ օհ, շէնի կի ճիրի մէ, ալա-վէրպի, եախշի-օլ, և այլն: Աջ կողմից մտնում է Եւալն ցիմնդրով, ձեռնոցներով, պէնսնէով, ձեռնափայտով եւ ամենաշքեղ մի ծաղկէ փունջ ձեռին:

**ՏԵՍԻԼ Բ**

ՆՐԱՆՔ, ԵԽԱՑԼՆ

**ՂԱՂՕ, ՄՈՍԷՍԻՆ:**

Յօրէն, էկաւ:  
ՄՈՍԵՍ, առանձին, բռունցըք կրծքին տանելով:  
Վոյ մէ... (Ղաղօին, ցածր:) Յարա պատիկ\*) արա.  
միթամ վունչիչ խարար չկայ:

ՂԱՂՕ, նոյնպէս ցածր:  
Էտ ՚ես զիգիմ: (Նուազածուներին:) Տնւշ, տնւշ:  
Ածում են տուշ:

ՄՈՍԵՍ, դէմ գնալով Եւալնին:  
Համեցէք, պարուն. ինչի՞ ուշացար:  
ԵԽԱՑԼՆ, Թողնում է ձեռնափայտը բեմի խորքում եւ գրլիսարկը վերցնելով, ողջունում է:

Ներողութիւն, ներողութիւն, պարսն... զանազան գործեր և հանգամանքներ ստիպեցին ինձ կորսւսանել մի քանի բոպէ բաւականութեան. բայց յոյս ունիմ՝ այնպիսի զուարճութիւն ստանալ այստեղ, որ կորուսեալ ժամանակս մոռանամ... և այլն:

Հէստի քէփ շանց տանք քիզ, պարուն, վուր զիփ մէտի մոռանաս:

\*) Յարգ ու պատիւ:

ԵԽԱՅԼՆ, զլխարկը ծեռին, գլուխ տալով՝ Դաղօին, դառ-  
նում է Մոսէսին:

Իսկ այս փունջը, խնդրեմ, տիկնոջը ուղարկէք իմ  
կողմանէ:

**ՄՈՍԷՍ**, առնելով փունջը:

Ինչի՞ էլի նիղանում. ջեր էստի կենայ, սումբին  
սաղ գու քայ: (Տալով փունջը Դաղօին:) Էս մէ էնդի  
սարքէ, հինց ապրիս:

ԵԽԱՅԼՆ, մեկուսի:

Նախանձում է... Լաւ ժաշուզի... ժը քօնէ:

**ՄՈՍԷՍ**, հրաւիրելով Եւայնին հիւրերի կողմը:

Համեցէք, համեցէք, պարուն... (Դաղօին, ցածր):  
Դաղօ ջան, մէքիչ գինուն զօռ կ'օնիս... (Սէրգօին:)  
Սէրգօ, ասա, էլի գինի բերին:

Սէրգօն զուրս է վազում աջ կողմից:

ԵԽԱՅԼՆ, զլխարկը ծեռին, մօտենալով հիւրերին:

Բարեաւ ձեղ, յարգելի պարոններ:

ՀԻՒՐԵՐ

Բարով, բարով, համեցէք, պարուն:  
ԵԽԱՅԼՆ, Մոսէսին:

Աթոռ, աթոռ հրամայեցէք, խնդրեմ. այդպէս նըս-  
տել յարմար չէ:

**ՄՈՍԷՍ**, չքրէզկաւոր սպասաւորին:

Մէ սկամի բի:

Սպասաւորը զուրս է վազում աջ կողմից:

Սէրգօ, վերադառնալով, Մոսէսին, ցածր:

Ախչիկ-պարունը խնդրում է. մէ նմուտ էստի հա-  
մեցէք, կ'օսէ:

Մոսէսը իսկոյն զուրս է գնում աջ կողմից. Սէրգօն  
հետեւում է:

### ՏԵՍԻԼ Գ

ՆՐԱՆՔ, առանց ՄՈՍԷՍԻ

**ՀԱԴՅ**, Եւայնին:

Էլ ինչ սկամի, համեցէք նստի, վունցոր մինք  
ինք, էնենց էլ հրամանքդ միզ մօդ դաբուլ աբա:

Նստում է իր տեղը և ծաղկէ փունջը դնում է  
սփոցի վրայ մի ծաղկակալի մէջ:

ԵԽԱՅԼՆ

Ջատ ուրախ կը լինէի, պարոններ, ձեզ հետ նըս-  
տելով, ձեզ պէս վարուէի. (Գլխարկը վայր դնելով գորզի  
վրայ և բաղցրութեամբ:) Բայց ծնկներս ծալել, ինչ-  
պէս գուք էք ծալում, չեմ կարող. հաւատացէք՝ չեմ  
կարող... ի մանկութենէ սովոր չեմ... (Խօսելով, ձեռ-  
նոցները հանում է:) Այնու ամենայնիւ զարմանալի է,  
որ ամեն բանում մենք ամենքս աշխատում ենք Եւրո-  
պացւոց նմանուիլ. իսկ մի քանի գէպքում դարձեալ  
մնում ենք (Ժատալով:) իսկ և իսկ հին Ասիացիք:

Չեռնոցները ճգում է զլխարկի մէջ:

**ՀԱԴՅ**

Էս մէկը բախչէ, պարուն, ու յօրէսի դէնը ստօլի  
վրայ կու մեծրինք քիլի: (Զէրքէզիաւոր սպասաւորը բե-  
րում է մի աթոռ. իսկ նրան հետեւելով ֆրակաւոր սպա-  
սաւորը—բոլորակ փոքրիկ սեղան, հարկաւոր պարագանե-  
րով:) Այ, համեցէք նստի. քիլ համա ստօլ էլ ին  
բերի:

ԵԽԱՅԼՆ, խորին զլուխ տալով:

Ջատ չնորհակալ եմ, պարոն, ձեզ առանձին ու-

ԵԽԱՅԼՆ, զլխարկը ծեռին, զլուխ տալով՝ Դաղօին, դառնում է Մոսէսին:

Իսկ այս փունջը, խնդրեմ, տիկնոջը ուղարկէք իմ կողմանէ:

**ՄՈՍԵՍ**, առնելով փունջը:

Ինչի՞ էլր նկամում. ջեր էստի կենայ, սուվիրին սաղ գու քայ: (Տալով փունջը Դաղօին:) Էս մէ էնդի սարքէ, հինց ապրիս:

ԵԽԱՅԼՆ, մեկուսի:

Նախանձում է... Լս ժաշողի... Ժը քօնի:

**ՄՈՍԵՍ**, հրաւիրելով Եւայնին հիւրերի կողմը:

Համեցէք, համեցէք, պարուն... (Դաղօին, ցածր): Դաղօ ջան, մէքիշ գինուն զօռ կ'օնիս... (Սէրգօին:) Սէրգօ, ասա, էլի գինի բերին:

Սէրգօն զուրս է վազում աչ կողմից:

ԵԽԱՅԼՆ, զլխարկը ծեռին, մօտենալով հիւրերին:

Բարեաւ ձեղ, յարգելի պարոններ:

Հիւրեր

Բարով, բարով, համեցէք, պարուն:

ԵԽԱՅԼՆ, Մոսէսին:

Աթոռ, աթոռ հրամայեցէք, խնդրեմ. այդպէս նլստել յարմար չէ:

**ՄՈՍԵՍ**, չըրքզկաւոր սպասաւորին:

Մէ սկամի թի:

Սպասաւոր զուրս է վազում աչ կողմից:

Սէրգօ, վերադառնալով, Մոսէսին, ցածր:

Ախչիկ-պարունը խնդրում է. մէ նմուտ էստի համեցէք, կ'օսէ:

Մոսէսը իսկոյն զուրս է զնում աչ կողմից. Սէրգօն հետեւում է:

### ՏԵՍԻԼ Գ

ՆՐԱՆՔ, առանց ՄՈՍԵՍԻ

**ՂԱՂԹ**, Եւայնին:

Էլ ինչ սկամի, համեցէք նստի, վունցոր մինք ինք, էնէնց էլ հրամանք միզ մօք զարուլ արա: Նստում է իր տեղը եւ ծաղկէ փունջը դնում է սփոռոյի վրայ մի ծաղկակալի մէջ:

ԵԽԱՅԼՆ

Ջատ ուրախ կը լինէի, պարոններ, ձեզ հետ նըստելով, ձեզ պէս վարուէի. (Գլխարկը վայր դնելով գորգի վրայ եւ բաղցրութեամբ:) Բայց ծնկներս ծալիւ, ինչպէս զուք էք ծալում, չեմ կարող. հաւատացէք՝ չեմ կարող... ի մանկութենէ սովոր չեմ... (Խօսելով, ծեռնոցները հանում է:.) Այնու ամենայնիւ զարմանալի է, որ ամեն բանում մինք ամենքս աշխատում ենք Եւրոպացւոց նմանուիլ. իսկ մի քանի գէպքում դարձեալ մնում ենք (Ճպալով:.) իսկ և իսկ հին Ասիացիք:

Չեռնոցները ձգում է զլխարկի մէջ:

**ՂԱՂԹ**

Էս մէկը բախչէ, պարոն, ու յօրէսի դէնը ստօլի վրայ կու մեծրինք քիզ: (Զէրքէզկաւոր սպասաւորը բերում է մի աթոռ. իսկ նրան հետեւելով ֆրակաւոր սպասաւորը—բոլորակ փոքրիկ սեղան, հարկաւոր պարագաներով:) Այ, համեցէք նստի. քիզ համա ստօլ էլ ին բերի:

ԵԽԱՅԼՆ, խորին զլուխ տալով:

Ջատ չնորհակալ եմ, պարոն, ձեզ առանձին ու-

շաղբութեան համար: (Գլխարկը վերցնելով:) Ներողութիւն, ևս իսկո՞յն:

Գլխարկը տանում է, զնում է մի կողմ քեմի խորում իր ձեռնափայտի մօտ, մինչդեռ սպասաւորները պատրաստում են նրա համար սեղանը, քեմի աջ կողմը, ծաղիկների մօտ:

Նոյն միջոցին:

ԱՌԱՋԻՆ ՀԻՒԹ, ՂԱՂՈՒՆ:

Ես մի է:

ՂԱՂՕ

Վահ, չի՞ք ճանչնա, էս մի՞ր պարուն 'Եւայլն է:  
ՄԻՔԱՆԻ ՀԻՒԹԵՐ

'Եւայլն:

ՂԱՂՕ

Հա, Փրանգստնէմն նուր է էկի... Կիրենաք՝ լաւ  
կայ իր համա. գովութումը զմզմում է:  
ԵՐԿՐՈՐԴ ՀԻՒԹ

Խնչոր վուր է, լաւ կի շապուից միզ դիմունիս ու:  
ԱՌԱՋԻՆ ՀԻՒԹ

ՄՌԱԿԱՓ, դրա ջիզը չիմ ուտի. մի վախենա...  
Փուզն ու հարստութիւնն է դրան լիզու տալի ու  
էտէնց խօսեցնում:

Ֆրակաւոր սպասաւորը զուրս է վազում աջ կողմից:  
ԵԽԱՅԼՆ, վերադառնալով:

ՂԱՂՕ

Համեցէք, համեցէք նստի: (Եւայլն գլուխ տալով,

նստում է աթոռի վրայ, որ մօտ է բերում չէրքէզկաւոր սպասաւորը:) Էտէնց, միթամ զուն մի՞ր մինձաւուրն իս:  
ԵԽԱՅԼՆ, ոտի կանգնելով:

Հաւատացէք, պարոն և գուք պարոններ, որ ես  
ամենեին դիտաւորութիւն չունիմ՝ որիէ կերպիւ ձե-  
զանից բարձր երեալու... Սրգար է, ևս այժմ ձեր  
կարգում չեմ նստած և մի փոքր հեռու եմ ձեզա-  
նից, այնու ամենայնիւ սիրտս ձեզ մօտ է միշտ և ես  
ձեզն եմ յաւիտեան: (Զատերը ծափահարում են: Գլուխ  
տալով:) Մենք ամենքս, պարոններ, եղբայրներ ենք:  
Նստում է:

ՂԱՂՕ, Եւայլնին:

Ա'յ, ափէրում:  
ԵՐԿՐՈՐԴ ՀԻՒԹ, առաջինին:

2է, էրէսը դէսն է էլի:

ՂԱՂՕ, հիւրերին:

Արա, տղէրք, զինի ածէք, պարուն 'Եւայլի կի-  
նացը լիքը լիքը պիտիք դարզըկի, հը. էլ ալա-վէրդի  
եախշի-օլ չկայ, զէմուդէմը խմեցէք... Տուշ, տուշ:  
(Ածում են տուշ: ) Պարուն 'Եւայլն, քու հրամանուց կի-  
նացը:

Եւայլն ողջունում է, Ղաղօն խմում է: Մէրգօն եւ  
ֆրակաւոր սպասաւորը մեծ զամբիւրով բերում  
են շիշերով զինի:  
ԵՐԿՐՈՐԴ ՀԻՒԹ

Պարուն 'Եւայլն, ձիր կինացը:  
ԵՐԿՐՈՐԴ ՀԻՒԹ

2իր կինացը:

ՅՈՐՈՐԴԻ ՀԻՒԹ

Հիր կինացը:

Խմում են:

ԱՌԱՋԻՆ ՀԻՒԹ

Պարուն 'Եւայլն, ձիր հրամանուց կինացը... Տղէլք,  
միր պարուն 'Եւայլի կինացը:

Խմում է:

ՄԻՒՄ ՀԻՒԹԵՐ

Հիր կինացը, ձիր հրամանուց կինացը:

Խմում են: Եւայլն ամենքին կարգով գլուխ է տա-  
լիս իր ժամանակին:

ՂԱՂՕ, Եւայլնին:

Արա, մէ չնորակալութին անուշ արա:

ԵՒԱՅԼՆ

ՄԵծաւ ուրախութեամբ: (Այնելով բաժակը, ոտի է  
կանգնում:) Ճնորհակալ եմ, պարոններ, խորին շնոր-  
հակալութիւն... գրամ մերսի... (Խմում է:) Թէսլչտ  
շունիմ պատիւ ձեզ ճանաչելու և ձեզ ծանօթ լինե-  
լու, սակայն յոյս ունիմ, պարոններ, որ շուտով կը  
ճանաչենք միմեանց և ես կ'արժանանամ ձեզ գնա-  
հատութեան... և այլն:

ԿԱՍՏՈՒՄ Է:

ԵՐԿՐՈՐԴԻ ՀԻՒԹ, իր դրացուն, ցածր:

Էս ԲԻՆՀ ՆԻՔԱՒ ՄԿԵՄՔՆ Է Կցում, տօ:

ԱՌԱՋԻՆ ՀԻՒԹ, Եւայլնին:

Ումիկ ունինք, պարուն, վուր միր աստղն էլ միզ  
օտել՝ քիզ միր գլուխը լաւ ճանըցնիլ տալու:

ՂԱՂՕ

Լաւ է, ձիր հօրն օղորմի, բա դրօս աստղաբա-

ՀՊԱԾԻՆ է ու ցերեմօնիէք. քէփ ինք անում, քէփ ա-  
նինք... էս զինին տաքցաւ էստի ձեռիս: (Եւայլնին:)  
Արա, պարուն, ջեր մէ թարջիմումը անուշ արա էս  
'երիք ստաքանը, վուր ուշացար:

Առաջարկելով Եւայլնին ափսէի վրայ գինով լիրը  
երեք բաժակ, որ տալիս է չէրքէզկաւոր սպա-  
սաւորին:

ԵՒԱՅԼՆ

Այդքանը ի միասին. տուէք ինձ ժամանակ, խնդրեմ:  
ՂԱՂՕ

ԶԵ, չէ, պարուն, պիստի միզ հիդ դրսստվիս: Էս  
էլ մինձ խաթին ինք անում քիզ:  
ԵՒԱՅԼՆ

Զեր պահանջը ճշմարիս չէ:  
ՂԱՂՕ

Թէ ճշմարտութինը կու սիրիս, պիտիս խմի, ախ-  
պէր:

ԵՒԱՅԼՆ

Ճշմարտութիւն, շա վերիիթէ:  
ՂԱՂՕ

Բաս մինք քանի ինք խմի. տաս երկու կինաց  
թաս աւել ինք դարդըկի, կարքէն դուսը հալա գէնը  
կինայ: Էտ 'երիք ստաքանն էլ, հէր օխնած, հրա-  
մանքդ անուշ արա, է, վուր միր խօսկիրը քի մօդ  
յիմար չէրկայ... (Եւայլն տատանում է:) Խմէ, թէ քու  
հօր գերեզմանը կու սիրիս:  
ԵՒԱՅԼՆ

ԳԺՈՒԱՐԻՆ է, գԺՈՒԱՐԻՆ, պարոն:

## ՂԱՂՕ

Հաջաթ չէ, մտկումդ սիրելնիտ անումը տու,  
հիշտ գէվէր կ'էհայ,

## ԵՒԱՅԼՆ

Այնպիսի սուրբ բառ ասացիք, որ այսուհետև այդ  
բաժակներից հրաժարուիլը ամենամեծ յանցանը կը  
լինէր... և այլն:

## ՂԱՂՕ

Ասում իմ, Է:

Եւայլն առնում է սպասաւորից բաժակները եւ  
սկսում է կամաց-կամաց խմել:

ԵՍԻԱՆԴՈՒՆ, սազի ներդաշնակցութեամբ երգում է:

«Էշխըն վառ կըբակ է՝ էրվելով գու քայ. —  
Ժատ մարթ կ'օսէ՝ ես եարի հիդ ման գու քամ: —  
Էս դարդէմին ով չէ քաշի՝ վնաշ քաշէ,  
Ո՛վ եար սիրէ, Էլ չասէ, թէ՝ «ջան գու քամ:» եւն:  
ՍԱՅՍԹ-ՆՈՎԱՅ

ԵՒԱՅԼՆ, մինչդեռ երգը շարունակվում է, խմելով:  
ՎՀՈՒԱՂԱՇ դհօձ... Ահա այս մինը տւարաեցին  
ահա երկրուղը... ահա և այս երրորդը... և այն:  
(Երգը վերջանում է: ) Թողէք, ինըրեմ, այդ ասիական  
երգերը... Առէք օրինակ Եւրոպացւոց քաղցր և քնքոյշ  
երգերից. զորօրինակ՝

Ոտի կանգնելով, հիանալի երգում է իտալական օ-  
պերայից մի երգ հայերէն լեզուով: \*)

\*) Եւայլնի գերը գրած է պ. Արսէն Կարապետեանի

## ՀԻՒՐԵԲ, ծափահարելով:

Բի՛ս, բի՛ս, բի՛ս... (Մէկը նրանցից:) Դանա մինք  
չի՞նք զիդի նուր զայդի խաղիր:  
Երգում են Եաւանգուի հետ միասին՝

«Բաժակներ առնունք, եղբարք,  
Լիք լիք բաժակներ զինով,  
Կարմիր ու ճկրմակ զինին  
Մեզ լինի անուշ համով:» Եւ այն:

Թ. Տ—Դ. ՊԱՏԿԱՆԵԱՆ

Միքանի վայրկեանից յետոյ Եւայլն մասնակցելով  
այս խմբին, առանձին փայլ է տալիս ամբողջ  
երգին:

ՂԱՂՕ, երգը վերջանալուց յետոյ:

Արա, մէ կինաց, մէ կինաց. բօղազներուս խան-  
ձկեցաւ... էս էլ Աստուծ սաղ պահէ միր Եաւան-  
գուրուն... Եաւանգուլ ջան, շատ ապրիս. ձէնդ ան-  
պակաս ըլի միզմէն. ուրախ ըլիս համաշա:

ՀԻՒՐԵԲ

Եաւանգուլ ջան, քու կինացը:

Ածում են տուշ. ամենքը խորում են: Սպասաւորնե-  
րը փոխելով հիւրերի սպասները, բանեցրածները  
դուրս են տանում աշ կողմից:

Համար, որ իր գեղեցիկ ձայնով և շնորհալի խաղով, այս  
գերը կատարելիս, հիացրեց հանգիսականներին և որ այնու-  
հետև իր տաղանդի շնորհիւ հրաւիրուեց Մօսկվայ օպէրէ-  
տային թատրոն, ուր երկար տարիներ ծառայելով Դաւի-  
դովի անունով, մեծ հռչակի արժանացաւ:

ԵՍԻԱՆԳՈՒԻ, յանկարծ բարձր ձայնով «քայաթի» է երգում.  
Քերչացնելուց յետոյ, բաժակը ձեռին, ոտի է կանգնում:

Ճնորակալ իմ, պարուննիր, դուք սաղ ըլիք ինձ  
համա... (Խմում է, յետոյ դիմելով Ղաղօին:) Հիմի, պա-  
րուն թամալա, կամք տու, մէ կինաց էլ ՚ես ասիմ:  
ՂԱՂՕ

Ասա, եաւանդուլ ջան, մասա, դէթաղվա:  
ԵՍԻԱՆԳՈՒԻ, շարունակելով:

Էս էլ նրանց կինացը՝ վուրդի հիւանդ ու նիզա-  
ցած կայ, թէ մարթ, թէ կնիկ. Աստուձ նրանցը  
ջան տայ, առուխչութին ու իրանց ցաւէմէն աղա-  
տութին... Բախտաւուրութին է ու բախտաւուրութին:  
ԲՈԼՈՐԵՔԵԱՆ

Ամին, ամին, ուրամ...

ԵԻԱՅԼՆ

ԿԵՋԵՔ:

ԲՈԼՈՐԵՔԵԱՆ

ԿԵՋԵՔ, տուշ, տուշ...

Ո. ԾՈՒՄ են տուշ. խմում են. Եաւանդուլ նատում է:

ԵԻԱՅԼՆ, ոտի վրայ եւ բաժակը ձեռին, սաղի ներդաշ-  
նակցութեամբ ու շատերի ձայնակցութեամբ, գեղեցիկ եր-  
գում է:

«Եղբարք՝ մի շուրջ ժողովեցէք,  
Քաջ չայոց կերպիւ կոնծեցէք,  
Բաժակներդ դարդըկեցէք | Կրկնէ: Եւ այլն:  
Մեր հայ աղգի կինացը:»

Ք. Տ—Պ. ՊԱՏԿԱՆԵԱՆ

Խմում է եւ շարունակում է երգը:

Ճիկրեր, երգը վերջանալուց յետոյ:  
Բրակօ, բրակօ, պարուն ՚Եւայլն:

ՏԵՍԻԼ Դ

ՆՐԱՆՔ, ՄՈՍԷՍ, որ զուրս է գալիս ազ կողմից:

ԵԻԱՅԼՆ, շարունակ ոտի վրայ, լցնում է բաժակը եւ զի-  
մելով Ղաղօին:

Պարոն թամալա, թոյլառութիւն եմ խնդրում՝  
մի կինաց թաս հռչակել:

ՂԱՂՕ

ՀՐԱՄԱՆՔ արա:

ԵԻԱՅԼՆ

Ես առաջարկում եմ մի կինաց, այնպիսի մի կե-  
նաց, պարոններ, որ յոյս ունիմ, ամենքդ յօժարու-  
թեամբ կ'ընդունէք... Մեր պատուելի... հիւրասէր  
տանտիրոջ կինացը, առնափրոջ, որին ի սրաէ ցան-  
կանում եմ՝ երկար կեանք, առողջութիւն, բախտա-  
ւորութիւն, ամեն անսակ յաջողութիւն... և այլն, և  
այլն: Տնւշ, տնւշ, պարոններ: (Ո. ԾՈՒՄ են տուշ:) ԿԵՋԵՔ:  
Ճիկրեր, միասին:

ԿԵՋԵՔ... Միը խազէինի կինացը, Մոսէս ջան, քու  
կինացը, քու կինացը Մոսէսին:  
ՂԱՂՕ, մօտենալով Մոսէսին:

Մոսէս ջան, քու կինացը. սաղ ըլիս, վար ըլիս:  
Համբուրվում են: Տուշը շարունակում է. ամենքը  
խմում են:

**ՄՈՍՔԸ,** բաժակը ձեռին:

Ճնորսակալ իմ, աղէրք, շատ ապրիք. քէփ արէք,  
դէթաղվա... (Ղաղօին:) Ղազօ ջան, ապրիս, բախտա-  
ւուր ըլիս... (Խմում է. յիտոյ կրկին Ղաղօին, ցածր:)  
Ե՛փ, էլ չիմ կանացի զլուխս պահի. տեսար՝ ինչ  
դալթաբանդութին բանեցրուց. միթամ խիստ է ու-  
զում իմ լաւութինը:

**ՂԱԶՕ,** նոյնպէս ցածր:

**Դէվէք տանիմ:**

**ՄՈՍՔԸ,** նոյնպէս:

2Է, մնալափ տու ջեր. (Սպասաւորները սկուտեղնե-  
րով բերում են գեղեցկագարդ պաղպաղակ:) քաղցրեղէն  
ին բերում:

**ՂԱԶՕ,** նոյնպէս:

**Դուն գիղիս:**

Գնում է դէափի իր տեղը:

**ՄՈՍՔԸ,** բարձր:

Ղազօ, միրքն ինչ արիր:

**ՂԱԶՕ**

Մէրգօ, Մէրգօ, էտի բօշի էղնէն խախլով միրք  
կայ, բի էսափ, հէնց ապրիս:

Մէրգօն խախլով բերում է ամենաընտիր մրգեղէն-  
ներ:

**ԵՒԱՅԼՆ,** տեսնելով միրգը, մօտենում է Մոսէսին:

Չեր նուրբ ճաշակը ինձ հիացնում է: (Մեկնելով  
ծեռը Մոսէսին:) Թոյլ տուէք ինձ սեղմել ձեր պատուա-  
կան ձեռքը:

Մոսէսը ակամայ տալով Եւայնին ծեռը, առանձին,  
տհամութիւն է արտայայտում:

**ՂԱԶՕ,** առնելով Մէրգօյի մէսից խախալու:

Արա, աղէրք, տեսէք ինչ թարփ իմ շինել տպի  
ձիգ համա:

Խախալը սփոռցի վրայ դնելով, նստում է:

Հիւրեղ

Պա, պա, պա, պա... ջան, ջան, Ղազօ ջան, ջան  
թամապա...

**ԵՒԱՅԼՆ,** մօտենալով Ղաղօին:

Ուրեմն պարատառը եմ սեղմել և ձեր ձեռքը...  
(Առնելով ձեռը:) Երկու եղբայրդ էլ մեծ պովասանքի  
էք արժանի:

**ՂԱԶՕ**

Վիրշն է զովելի:

Մոսէսը նստում է Ղաղօի մօտ կամ դիմացը: Նի-  
նօն երեւում է լուսամուտում եւ խկոյն անհե-  
տանում է:

**ԵՒԱՅԼՆ,** տեսնելով Նինօին, առանձին:

Ահա կեանքիս նպատակը... իմ աստուածուհին.  
մա դէկու:

**ԵՍԻԱՆԳՈՒԼՆ,** սագի ներդաշնակցութեամբ երգում է:

«Հայոց աղջիկներ, ձեր հոգուն մատաղ,  
երբ միտս էք գալիս, ասում եմ ես «ախ»,  
չալվում եմ, հալվում օտարութեան մէջ,  
Ախ, սիրտս խորվում, ցաւիս չկայ վերջ:» Եւ:

Քշոր. ՄիրիՄԱՆԵԱՆՑ

**ԵՒԱՅԼՆ,** մասնակցելով Երգին, կրկին հիացնում է ամեն-

քին իր ձայնով. յիտոյ, դարձեալ կանգնած:

Պարսններ, պարսններ, ուշադրութիւն, ուշադրու-

թիւն... նախապէս թոյլտուութիւն եմ խնդրում մեր  
բարի թամազայից առաջարկելու մի կենաց թաս ևս:  
**ՂԱՂՕ**

չբամանք արա, ևս դարուլ իմ:  
ԵՒԱՅԼՆ, վերջնելով լիքը բաժակ:

Այս երկրորդ կենաց թասն է իմ առաջարկու-  
թեամբ, որ կարծեմ աւելի ախորժելի պէտք է լինի  
ձեզ ամենիդ... Մեր քնքոյշ տանտիկնոջ կենացը:  
**ՂԱՂՕ**, Մոռէսին, ցածր:

Հախն է, վուր վէր տանք:  
**ՄՈՍԷՒ**, նոյնպէս:

Մնւափ, էստի չի սազ գայ:  
ԵՒԱՅԼՆ

Խնդրեմ, պարոններ, բաժակները լցնել... (Դառ-  
նալով պէտի դատարկ լուսամուտը:) Բնել դասմ... Ամե-  
նագեղեցիկ տիրուհի, ահա բաժակը, որի մէջ պա-  
րունակում են իմ ջերմեանդ իդաերը... Ի բոլոր  
սրտէ ցանկանում եմ ձեզ՝ ամենաերկար կեանք, ան-  
խախա առողջութիւն, յարատե երջանկութիւն, մըշ-  
տնջենական գեղեցկութիւն... (Երդելով:) Եւ...այ...  
լըն... Կեցցէ:

Հիկրեր, միասին:

Տնւշ, տնւշ, տանդիկնի կենացը, տնւշ... Կեցցէ:  
Ածում են տուշ, նիսօն երեւում է լուսամուտում  
և գլուխ տալով հեռանում է. ամենքը խմում  
են. Եւայլն, առանձին եւ անձայն, խորը հոգւոց  
է հանում:

**ՄՈՍԷՒ**

Ճնորակալ իմ, շնորակալ, տղէբք. ապրիք, բախ-

տաւուր ըլիք... (Խմում է. յետոյ Դաղօխն, ցածր:) Աբա՛,  
Դաղօ, վուխան է, ղէվէր տար:  
**ՂԱՂՕ**, հիւրերին:

Տօ, լինչ ինք էստի սօկօ դառի, ղէվէր գնանք  
Խէյվանը:

Հիկրեր

Գիանք, գնանք:

Ամենքը վեր են կենում:

ԱՌԱՋԻՆ Հիկր

Զեր մէ ձեռաց լէզգէվար, լաւ չի ըլի:  
Միիւն Հիկրեր

Լաւ, լաւ:

**ՂԱՂՕ**

Խիստ լաւ կուլի, համեցէք՝ լէզգէվար:  
Ոծում են լեզգերէն պարի եղանակը, պարում են՝  
զեռ առաջին հիւրը, յետոյ միւսները. Նիսօն  
զալիս է, լուսամուտից նայում է պարին:  
ԵՒԱՅԼՆ, տունձին:

Այս կինը խելքից կը համէ ինձ բոլորսպին:  
**ՂԱՂՕ**, պարը վերջանալուց յետոյ:

Աբա՛, եաւանդուլ ջան, հիմի մէ լաւ լօթէրօ:  
ԵԱԿԱՆԳՈՒԼ, երգում է սազի ներդաշնակցութեամբ:

«Լօթէրօ նէտափ չվէնա, արիա-լալի,  
Դղէս մօդիէցա շվէրա-լիսէնա, թարիա-լալի.  
Ճէմօդգօմամա բախուսի, արիա-լալի,  
Սածնալսէլի չատկէնա, թարիա-լալի:»

Սազի ձայնակցութիւնը շարունակում է:

ԱՌԱՋԻՆ ՀԻՒՐ

Համ-ջան, համ-ջան, եաւանգուլ ջան:

Հիւրերը սփոռցից վերցնում են ճրապներ. Կինօն  
մնում է լուսամուտում:

ԵԽԱՑԼՆ, նայելով, նվազին, առանձին:

ԱՌՎ գեղեցկութեան աստուածուհի:

Առանձին, հալ ու մաշ է լինում: Ճեռուից լսվում է  
շուշ ձայն:

## ԴԱՊՈ

ԸՆԴՀԱՄ... ՍԵՐԳՈ, ՍԵՐԳՈ, դէվէր վաղի, հէնց ապ-  
րիս. զուռնաշխ Աբաէմն է նշան տալի: Տնան ըի, թնդ  
ներքիւը, հասուկի մօդ, մէ լաւ «սահարի» ածէ:

Սէրգօն զուրս է վազում ձախ կողմից:

ԱՌԱՋԻՆ ՀԻՒՐ, Դաղօին:

Քի սլէս թամազա չի ըլի, Դաղօ ջան:

ԵԱԽԱՆԳՈՒԼ, շարունակում է:

«Թաղինդ զամթարի հղինավուէս, արիա-լալի,  
դինդ դվավից վէղարա հիվինավուէս, թարիա-լալի.  
Վէր չէպվաշինօս սիցիւէմ, արիա-լալի,  
Թու թալշի դինհօ պրծդինավուէս, թարիա-լալի:»

Սազի ծայնակցութիւնը դարձեալ շարունակում է:

ԵՐԿՐՈՐԴ ՀԻՒՐ

Ճիրի մէ շէնի, եաւանգուլ:

ԵՐՐՈՐԴ ՀԻՒՐ, կոկորդային ծայնարկութեամբ:

ԸՆԴՀԱՄ:

ԱՌԱՋԻՆ ՀԻՒՐ, երկրորդին, ցածր:  
Նէքսէմէն խիստ ին նիդայնում սրան:

ՉՈՐՐՈՐԴ ՀԻՒՐ, սոխակի պէս գեղգեղում է:

ԱՌԱՋԻՆ ՀԻՒՐ

Բլբուլի ձէնիտ մեռնիմ, Միխալ ջան:

Հիւրերը վերցնում են սփոռցից մնացած բոլոր ճը-  
րապները:

ԵԽԱՑԼՆ, վերցնելով զիխարկը, առանձին:

Ես գնում եմ, բայց հոգիս մնում է այստեղ:

Բոլորեքիան միասին ճրապներով զուրս են գնում  
ձախ կողմից, բացի սպասարները, որոնք զուրս  
են գնում աջ կողմից: Մեղմ լոյս լուսնակից ևւ  
թղթէ լապտերներից:

ԵԱԽԱՆԳՈՒԼ, կուլիսում շարունակում է երգել:

«Մինդա վսկա, սաղինօ մամէ, արիա-լալի.  
(Կինօն զուրս նայելով լուսամուտից, ականջ է գնում երգին:)  
Մօձպվարօ, դաստուրի դամէ, թարիա-լալի.  
Եղիս ղլապվա ցօդիլիթ ծէսիա, արիա-լալի,  
ծարզինաա ամիս մօծամէ, թարիա-լալի:»

Լավում են նոյն գեղգեղանքը եւ սազի ծայնակցու-  
թիւնը:

ԵԱԽԱՆԳՈՒԼ, շարունակում է:

«Նօէմ բա էրթիւէլ ինէրա, արիա-լալի,  
կուրձնիս ծլինիս գէմօլինէրա, թարիա-լալի.  
(Երգի ձայնը հետզինտէ հեռանում է:)  
Թիթօն նունուաս միուղա, արիա-լալի,  
Եղալի պիրուաղիթ դաանէրա, թարիա-լալի:»<sup>\*\*</sup>

<sup>\*\*) Տէ՛ հետեւալ երեսուն:</sup>

Երգը դադարում է. լսվում են միայն սապի ձայնակցութիւնը եւ սոխակի նման երգը, որից յետոյ նինօն անհետանում է. իսկ ձափս կողմից մտնում է Սէրգօն շտապով դուրս գնում աջ կողմից: Մի փոքր անցած հեռուից լսվում է զուռնայի ձայնը. ածում են՝ «սահարի»:

\*) Վըացերէն է.—

Այս ընդարձակ երգը պատկանում է հանդուցեալ վրաց աշանաւոր բանաստեղծ իշխան Աղէքսանդր Շավիձավաձէին. իսկ ներկայ չորս տունը և հետեւել երկու տունը թարգմանուած են Պարոն Ն. Տ. Դ.-ից այսպէս՝

«Հնկեր լօթիք, երանի՛ մեղ, արիա-լալի,  
Եկէք քէֆի բանանք հանդէս, թարիա-լալի.  
Աշունքն եկաւ, անուշ գինին, արիա-լալի,  
Եթանք, ձօնենք մենք Բարոսին, թարիա-լալի:»

«Որքան էլ ցուրտ լինի ձըմեռ, արիա-լալի,  
Թէկուզ սառչին դիփ ագռաճներ, թարիա-լալի.  
Մեղ չեն ազգիլ սառնամանիք, արիա-լալի,  
Երբ գըլսի մէջ ցոլան գինիք, թարիա-լալի:»

«Գաւը դէս բեր, կամիմ խմել, արիա-լալի,  
Իրաւնչնք տուր, խոստովահնէր, թարիա-լալի.  
Զուր կուլ տալը մեղաւորաց, արիա-լալի,  
Զըհեղեղով տըւեց Աստուած, թարիա-լալի:»

«Նոյ նահապեան երբ կամեցաւ, արիա-լալի,  
Որթան հիւթի համը տեսնել, թարիա-լալի.

### ՏԵՍԻԼ Ե

ԵՒԱՅԼՆ, մենակ, յիլինդրը զվախն. զգուշութեամբ մտնելով ձափս կողմից, ափոցից վերցնում է իր թերած ձաղիկ փունջը, երկիւզով նայում է այս ու այն կողմը եւ մօտենում լուսամուտին:

Ահա երջանիկ լուսամուտը... (Շշնջելով կանչում է:) Տիրուհի... Տիրուհի... Մադամ... Շէր դամ... Աւազ, չէ լսում... Մտնել... բայց ճանապարհը... արգելվներ... պատահմունքներ... և այլն... (Նորից կանչում է:) Տիրուհի... տիկին... ամենագեղեցիկ նունէ... Շէր Նինէ՛թ, լսեցք... Աշ... (Աթոռը մօտենում է լուսամուտին եւ կանչում է վրան:) Տիրուհի... Հեռու է, չէ լսում... (Իշնում է, այս ու այն կողմը նայում, յետոյ ծեռը ճակատին տանիլով:) Օ՛, բախտաւոր միտք... (Տակառը զորելով տանում, կանգնեցնում է լուսամուտի տակ:) «Եւ ելեալ Մովսիսի ի լեառն Սինայ»... (Աթոռի միջոցով բարձրանում է տակառի վրայ:) Տիրուհի, տիրուհի... Օ՛, եթէ իմանայ ինչպէս է բարախում սիրտս... (Կրկին կանչում է:) Տիկին նունէ... ամնման նունէ... Մօ՛ սէ՛ժ... (Փունջը ձգում է սինեակը, տակառը կոտրվում է, ինքն ընկնում է մէջը:) Աշ...

Ցիլինդրը զլորվում է գետնին: Սրանից յետոյ զուռնան հեռուից լսվում է աւելի թոյլ ձայնով եւ շուտով բոլորովին դադարում է:

Ինքը վագան մօտ նըստեցաւ, արիա-լալի:  
Զուրն անասնոց թողեց խմել, թարիա-լալի:»

## ՏԵՍԻԼ Զ

ԵՒԱՅԻՆ, տակառում, ՄՈՍԷՍ, ՂԱՂՕ

ՄՈՍԷՍ, մտնելով ճախ կողմից:  
Գնաց ձեռնեմէս:  
ՂԱՂՕ, ճետեւելով Մոսէսին:  
2Է, էստի կուլի:

## ՄՈՍԷՍ

Թամ դուն, Ղաղօ ջան, էտթէնը պտուտէ. 'ես զը-  
նամ մէկէլ խէլվնօքը:  
Դուրս է գնում ճախ կողմից:

## ՏԵՍԻԼ Ե

ԵՒԱՅԻՆ, տակառում, ՂԱՂՕ

ԵՒԱՅԻՆ, գլուխը տակառից դուրս հանելով, առանձին,  
մինչդեռ Ղաղօն որոնում է նրան տակառից հեռու:  
Ո՞վ շար փորձութիւն, վամն էր հալածես զիս:  
Ոտի ճայն լսելով, իսկոյն թաքչում է տակառի մէջ:  
ՂԱՂՕ, ցիլինդրը գտնելով, կանչում է:  
Է'սթէնը, Մնսէս, գթայ... (Շարունակելով որոնել  
Եւայլին, առանձին; ) էս վժութէնն է կորի:

—○—

## ՏԵՍԻԼ Ը

ԵՒԱՅԻՆ, տակառում, ՂԱՂՕ, ՄՈՍԷՍ

ՄՈՍԷՍ, վերադառնալով:  
Աբա, վո՞ւրդի է, վո՞ւրդի:  
ԵՒԱՅԻՆ, գլուխը դուրս հանելով, առանձին:  
Մարսափելի դրութիւն... Քէշ սքամաղաշ...  
Նորից թաքչում է տակառում:

## ՄՈՍԷՍ, Ղաղօին:

Էտ նրա գդակը չէ. ինքն ի՞նչ էլաւ:  
ՂԱՂՕ

Մնւափ, է, պտուտինք:

## ՄՈՍԷՍ

Թէ բղավում էիր՝ գթայ, կ'օսէ:  
ՂԱՂՕ

Վահ, զլուխը խօ գթանք, վուտնիրն էլ հիշտ է:  
ԵՒԱՅԻՆ, գլուխը դուրս հանելով, առանձին:  
Բարբարոսներ:

Կրկին թաքչում է:

ՄՈՍԷՍ, ճակատին խփելով:  
Վայ քու տղիս տղայ, նինօի մօդ չըլի դիվեր  
գնացի:  
Շտապով դուրս է գնում աջ կողմից: Զախ կողմի կու-  
լիսում Եաւանգուլը, սազի եւ դուզուկի ներդաշնակ-  
ցութեամբ եւ հետզհետէ մօտենալով, երգում է՝

«Ամա սօփլիսա ցխօվրէրա, (Խմբովին:) արիտ-լալի,  
Վէրցլիթ ար մօխլօվէրա, (Խմբովին:) թարիտ-լալի.

Մդիվալնի բէկընի հօփիլան, (Ամբովին: ) աղիա-լալի,  
Օխրաթ բշխիաթ քօնէրա, (Խմբ: ) թարիա-լալի:\*)

Արանից յետոյ դարձեալ լսվում է սոխակածայն երգը եւ  
սազի ու դուդուկի ձայնակցութիւնը, ինչպէս նշա-  
նակած է իր տեղը, հետեւեալ տեսիլի վերջում:

### ՏԵՍԻԼ Թ

Միհայեան վերոյիշեալ երգը կատարվում է  
կոռշիտում:

### ԵԽԱՅԼՆ, տակառում, ՊԱՂՕ

ՂԱՂՕ, այս եւ այն կողմը գնալով, առանձին:  
Փի՛... (Եւայլնի զիսարկը դնելով մի կողմ, աչքը ծը-  
ռում է տակառին:) Էս էսթէնն ո՞վ էրի... (Մօտենում  
է տակառին. Եւայլն յանկարծ զլուխը դուրս է հանում,  
Դաղօն այլայլվում է: ) «Հրաժարիմք ի սատանայէ»:  
ԵԽԱՅԼՆ

### Պատուելի պարմն:

Աշխատում է դուրս գալ տակառից, բայց չէ կա-  
րողանում:

\*) ՎՐԱՑԵՐԷՆ Է. —

«Մեր առօրեայ կեանքն աշխարհի, արիա-լալի,  
Արծաթ-ոսկով չենք ձեռք բերի, թարիա-լալի.  
Շատ ենք տեսել մենք հարուստներ, արիա-լալի,  
Իրանք մեռած, կայքը անտէր, թարիա-լալի:»  
(ՏԵ՛՛ Ճահալութեան 50 Երեսում: )

### ՂԱՂՕ

Տէ՛ր օղորմած Աստուծ... Տօ, էտի ինչ իս շինում:  
ԵԽԱՅԼՆ

Ես... Ես...

ՂԱՂՕ, փրթկում է, յետոյ ծիծաղելով կանչում է:

Մնսէս, Մնսէս... (Վազելով դէպի աջ կողմի կուլի-  
որ: ) է'ստի է, էստի...

Դուրս է գնում աջ կողմից: Այստեղ վերոգրեալ երգը  
դաղարում է. Նրանից յետոյ լսվում են միայն սոխա-  
կի երգի նման գեղգեղանքը եւ սազի ու դուդուկի  
ձայնակցութիւնը, որ աւելի երկար է տեւում:

### ՏԵՍԻԼ Ժ

### ԵԽԱՅԼՆ, մենակ, տակառում:

Պուք այլտեղ սոխակի նման գեղգեղացէք, նրա  
սէրն ու աղատութիւնը վառարանեցէք. իսկ ես տան-  
ջուած իմ սիրով, բանտարկուած եմ այստեղ, ի խայ-  
տառակութիւն մարդկային ազգի... (Շարունակում է  
իր չանքը ազատուելու: ) Ո՞վ սէր, սէր, քանի և քանի  
մարդիկ ես կլանել գու աշխարհում, քանիսին զսի ես  
տարել քո կամակսութեանը... Ահա և ես ամենա-  
հաւատարիմ հապատակութեամբ գնում եմ իմ թշուառ  
գլուխը քո վարդակազմ և վշալից գահի տակ... Եղի-  
ցի կամք քո յաւիտեան... և այն:

Բոլոր հիւրերը ճրագներով եւ երգեցող ու նուազող  
խմբերի հետ միասին մտնում են ծախ կողմից,  
Եւայլն թաքչում է. բեմը լուսաւորվում է ինչպէս  
առաջ, ճրագները վայր են դնում սփռոցի վրայ:

## ՏԵՍԻԼ ԺԱ

ԱՄԵՆՔԸ. ԵԽԱՅԼՆ, տակառում, յետոյ ՆԻՇՈ, լուսամուտում:

ԵԱԽԱՆԳՈՒԻԼ, շարունակելով երգը:

«Թօս դավէսծըաթ զազափիսուլսա, (Խմբ.) արիա-լալի,  
Վէլսա վախտէթ մծվանէթ մօսիլսա, (Խմբ.) թարիա-լալի.  
Հվէն ծիթէլս զվինօս վէծափնէթ, (Խմբ.) արիա-լալի,  
Աջ կողմից դուրս են զալս Մոսէսը, Ղաղօն եւ  
նրանց հետեւելով Սէրգօն, ձեռին դազանակ:

ՂԱՂՕ, մինչդեռ անընդհատ կատարվում է երգը, Մոսէսին, ծիծաղերով եւ մատնացոյց անելով տակառը:  
Այլ քու պարուն ՚Եւայն:

Սէրգօն մնում է անկիւնում անշարժ:  
ԵԱԽԱՆԳՈՒԻԼ, շարունակելով:

Պարդի վանէթօթ բուկրուսա, (Եւայլն դուրսը դուրս  
է հանում տակառից:) թար... իա... լա... լի:» \*

Մաղը, դուդուկը եւ երգը ընդհատվում են:

\*) ԴՐԱՑՔԵՒՆ է.—

«ԵՐԵ-ՈՐ կանաչ բացուի գարուն, արիա-լալի,  
Կ'երթանք դաշտը մենք զարդարուն, թարիա-լալի,  
Եւ զոռ կըտանք կարմիր գինուն, արիա-լալի,  
Պարդը թողած սոխակներուն, թարիա-լալի:»  
(ՏԵՇ Ճանօթութեան 50 Երեսուած:)

## ԵԽԱՅԼՆ, տակառում:

Ես... ես, պարոններ, ուզում եմ ծանօթացնել  
ձեզ Դիոգինէս վիլխոսփայի հետ, որ ամենաաղքատ  
դրութեան մէջ ապրում էր հին ժամանակներում,  
մօտաւորապէս երկու հազար երեք հարիւր տարի մեցանից առաջ... նա իւր կեանքով ապացուցանում էր  
աշխարհի ունայնութիւնը և ուրիշ լնակարան չունէր,  
բացի մի տակառից, որի մէջ նա հանգստանում էր,  
ինչպէս ես այժմ այս տակառում... նա այն վիլխոս-  
փան էր, պարմններ, որ շոջելով բազմամարդ փողոց-  
ներում, օր ցերեկով, վառ լավաերը ձեռին, տառում  
էր՝ թէ մարդ է որոնում... Աղէքսանդր Մակեդոնացին,  
որ թագաւորում էր այն ժամանակ, երբ իմացաւ  
այս վիլխոսփայի համբաւը, վճռեց իւր մօտ պահել  
այս հանճարաւոր մարդուն, տալով նրան ամենաարածը պաշտօն թագաւորական պալատում... Սրա  
համար էլ այն մեծ թագաւորը անձամբ եկաւ, տեսաւ  
նրան տակառի մէջ արեի տակ տաքանալիս և  
հարցրեց՝ (Ողեւորութեամբ:) Դիոգինէս, Դիոգինէս,  
ի՞նչ մեծութիւն, վառք ու երջանկութիւն ես ցանկանում  
դու աշխարհում, տան, աւելին տամ քեզ...  
Դիոգինէսը, չնայած իւր վերին աստիճանի աղքատութեանը, պատասխանեց մեծ թագաւորին՝ (Աւելի ոգեւորութեամբ:) Ես ոչինչ չեմ ուզում քեզանից, տասց  
նա, բացի այն, որ մի փոքր հեռանաս իմ արեից,  
որից դու զրկում ես ինձ, առջևս կանգնելով... Այս  
պատասխանը լսելով, Աղէքսանդր Մակեդոնացին մը-  
տածեց՝ որքան աւելի երջանիկ է մի մահկանացու,  
որ ոչինչ ցանկութիւն չունի, քան թէ ի՞նքը, որ

կամենում է ամբողջ աշխարհի տէր դառնալ... և այլն,  
և այլն, և այլն:

Ամենքը մնում են արձանացած. Մոսէսն ու Պաղօն  
նայում են միմանց. Նոյն միջոցին նինօն,  
ծաղկէ փունջը ձեռին, գալիս է, կանգնում է  
լուսամուտում: ՊԱ.ՏԿԵԲ:

ԱՌԱՋԻՆ ՀԻՒԹ, փոքր ժամանակից յետոյ, Եւայլին:  
Զանում սան, ուստա-րաշի... (Նուազածուներին:)  
ԼԷԳՎԵՎար, լԷԳՎԵՎար, թէ ախպէր իք, լԷԳՎԵՎար...  
(Սազը եւ դուդուկը ածում են լեզգերէն պարի եղանակը:)  
Տաշ, տաշի... (Պարելով:) Ըհհ, ըհհ, ըհհ... (Եւայլ-  
նին:) Դուն էտէնց, 'ես էտէնց. դուն գիդոն, 'ես  
ազատ... իւֆ, իւֆ, իւֆ, իւֆ... (Հիւրերի կողմը  
նայելով:) Արմ, Միխակ ջան, դուն վուր գիդիս...  
(Չորրորդ հիւրը սոխակի պէս երգում է, իսկ ինքը շա-  
րունակում է պարել եւ ձայնը աւելի երկարացնեով:) Իւֆ,  
իւֆ, իւֆ, իւֆ...

ԵԽԱՅԼՆ, տակառում, թեւերը խաղացնելով:  
Իւֆ, իւֆ, իւֆ, իւֆ...

Հիւրերից շատերը ծիծաղում են. Մոսէսը եւ Պա-  
ղօն, տեսնելով ծաղկէ փունջը նինօի ձեռին,  
զարմանում են ու զայրանում: ՏԵՍՈ.ԲՈ.Ն: Վա-  
րագոյրը կամաց կամաց իջնում է:

Վ Ե Բ Զ

### Փ Ո Փ Ո Խ Ո Ւ Թ Ւ Ի Ն Ն Ե Ր

[ԵՐԵՒ 30, ՊԱՇ 6 ՎԵՐԵՒԵՑ:]

վերցնելով բաժակը: Էս էլ՝ էրած ու խորված սիրելնի  
կինացը: (Արմունկով ծածուկ խթում է իր դրացուն եւ  
զլափ շարժմամբ, հայեացրով ու երեսը ծամածոելով ցոյց  
է տալիս նրան երրորդ հիւրի վրայ, որին եւ դիմում է:)  
Ալա-վէրդին քի մօդ իմ:

[Եւ ՊԵՏ:]

[ԵՐԵՒ 32, ՊԱՇ 8 ՎԵՐԵՒԵՑ:]

Իմ սիրալ խօ կոտրած է ու կոտրած, էնէնց բան  
բռնենք, վուր նրանց սիրտն էլ չկոտրվի ու էս քէփը  
ընթէներէմէն չղուս զայ դիփունանցը... Հիմի, Ղազօ  
ջան, էսէնց դարսինք՝ ղօնաղներուն վուր կու դէվէր  
տանիս խէվանը,

[Եւ ՊԵՏ:]

[ԵՐԵՒ 47, ՊԱՇ 15 ՎԵՐԵՒԵՑ:]

Ածում են լեզգերէն պարի եղանակը. պարում են՝  
դեռ առաջին հիւրը, յետոյ միւսները \*). Նի-  
նօն գալիս է, լուսամուտից նայում է պարին:

[Եւ ՊԵՏ:]

\*) Եթէ պարողներ լինին, ածում են ու պարում են  
հակ՝ «եալիկ» և «ուզուն դարա»:

## ՅԱԿԵԼՈՒՄ

[ ԵՐԵ 29 ]

«Ե՞կ խօսք ունիմ իլթիմազով,  
անգաճ արա, ո՞վ աճկի-լուս.  
Սըրտումըս ինթիզար ունիմ.  
քու տիսըն բարով, աճկի-լուս.  
Աջաբ քիզ ինչ գէթ իմ արի,  
կենում ես խըռով, աճկի-լուս.  
Աշխարս աշխարով կըշտացաւ,  
'ես քիզանից սով, աճկի-լուս:  
Մազման էլ օչով եար չէ սիրի,  
էս ինչ արիր, էս ինչ բան ա.  
Էշխէմէդ ջունուն իմ էլի,  
ման իմ գալի եանա եանա.  
էս դարդէն օչով շը քաշէ,  
վուր մէ դանգին չի դիմանա,  
Սիրտըս լուրի պէս խորվեցիր  
էշխիդ կըրակով, աճկի-լուս:  
Դոստիրըս դուշման շինեցիր,  
հագերուն ինչպէս դօստ անիմ.  
Անց կացած օրըն չիմ տեսնում  
քանի գ'ուզէ վուր դաստ անիմ.  
Աստուած վըկայ, խիստ դըժար է,  
գլուխըս ինչպէս դուս տանիմ.  
'ես մէ փուքըս նաւի նըման,  
քու էշխըն է ծով, աճկի-լուս:

Գ'ուզիմ բերանըս բաց անիմ,  
գովքըդ ասիմ թարիփի պէս.  
Տաս տարի է ման իմ գալի  
Փաղիշահի շահիփի պէս.  
Օխտըն տարի էլ ման գու քամ  
սազն ձեռիս Ղարիբի պէս՝  
Բութա զահսանամըս դուն իս,  
էլ չունիմ օչով, աչկի-լուս:  
Թէգուզ հազար գարդ ունենամ,  
'ես սըրտումըս ահ չիմ ասի.  
Իմ հուրմի հէքիմըն դուն իս,  
'ես էլ ուզիշ զահ չիմ ասի.  
Սայաթ-Նօվիշն ասաց. Զալում,  
'ես էն մահին մահ չիմ ասի՝  
չէնշափ ըլի՝ դուն վըրէս լաս  
մազըդ շաղ տալով, աճկի-լուս:»

ՍԱՅԱԹ-ՆՕՎԱՑ

[ ԵՐԵ 40 ]

«Էշխըն վառ կրակ է էրիելով գու քայ. —  
Զատ մարթ կ'օնէ՝ 'ես եարի հիդ ման գու քամ.  
էս դարդէմէն ով չէ քաշի՝ վնչ քաշէ.  
Ո՞վ եար սիրէ, էլ շասէ թէ՝ «Ճան, գու քամ»:  
Զատ մարթ կայ՝ էն գըլիսէն սըրտում ունէ դամ.  
Բազի մարթ չէ քաշի, էշխէմէն է խամ.  
Ինչ ասիս կ'օնիլ տայ՝ սէրն է անըսկամ.  
Հալվեցայ, մաշվեցայ. էլ ինչ «Ճան, գու քամ»:  
Էշխըն վուր կայ՝ հազար բարաթ հանգ ունէ.  
Ուշկ ու միտկըն կու քընեցնէ՝ բանգ ունէ.

Բըսնածըն չի թողնի՝ զայլիմ չանդ ունէ,  
Ենդու համա՝ խան հիդ կ'էհամ, խան գու քամ:  
Թէ դուն էշխի հիդ մանդալըն հարցընիս՝  
Զի գիմանայ Թօստօմ Զալլին՝ հարցընիս՝  
Թէ բէմուրվաթ եարի հալլին հարցընիս՝  
Ասում է թէ. «Սուլթան գու քամ, խան գու քամ»:  
Սայեաթ-Նօվին ասաց՝ շատի ջանք դըրի,  
Մէ բափա շըտեսայ հում կաթնակիրի.  
Օվոր ինձ չի սիրի, 'ես էլ չիմ սիրի.  
Մէրըն սէր կու բերէ, սիրեկան գու քամ:»

ՍԱՅԱԹ-ՆՕՎԱՑ

## [ ԵՐԵՒ 41 ]

«Բաժակներ առնունք եղբարք,  
Լիք լիք բաժակներ գինով,  
Կարմիր ու ճերմակ գինին  
Մեղ լինի անուշ համով:  
Բերներիս տանենք անվախ,  
Զէ գա խառնած կամ խարդախ,  
Նեկտար է և ոչ զինի,  
Խմենք, մեղ անուշ լինի:  
Արաքսայ ջըրով ցօղած,  
Հայոց արևով հասած,  
Հայոց աղջիկ է քաղել,  
Քընքոյշ ճեռներով քամել:  
Այս բերքն է Հայոց երկրին,  
Հայաստան տընկած նոյէն,  
Անմահ երկնային զինին  
Նա խմեց, երբ իջաւ սարէն:

Այս անուշ գինին խմուղը  
Սրաէն թնդ հանէ ոխը.  
Ամենքս էլ ասենք՝ ամէն,  
Որ շատ տայ մեղի ամ էն:»

Ո. Տ-Դ. ՊԱՏԿԱՆԵԱՆ

## [ ԵՐԵՒ 42 ]

«Եղբարք՝ մի շուրջ ժողովիցէք,  
Քաջ Հայոց կերպիւ կոնծեցէք,  
Բաժակները դարդըկիցէք | Կրկնէ:  
Մեր հայ աղջի կենացը:  
Հայոց երիտասարդներուն,  
Հայրենիք պաշտպանողներուն,  
Որոց անկումն-էլ սուրբ է մեղ—  
Այս բաժակը նըւիրենք:  
Հայ աղջիկներու կենացը,  
Ուր միայն հայ մարդ կու սիրեն,  
Միշտ իրանց մաքուր կու պահեն,  
Այս բաժակը դարդըկենք:  
Արանց, որ մեր սիրան զբաւում են,  
Մեղ զգօն ճամբով վարում են,  
Որոց կեանքը մեղ օրինակ,  
Մի երբեակ «կեցցէ» ասենք:  
Եղբարք, որք այժմ աւալտել են,  
Մեր ուխտի անդամ եղել են,  
Որոց ուխտը միշտ սիրում է,—  
Այս բաժակը նըւիրենք:  
Եղբարք, որք դարդից աղատ են,  
Մահուան համովիստ վայելում են,

«Ողորմի հոգուն» ասելով՝  
Այս բաժակը նըւիրենք:  
Բայց որ դեռ գինին փայլում է  
Ու մեզ իրան մօտ քաշում է,  
Բաժակներդ դարդըկեցէք  
Ազատութեան կենացը:»

Ք. Տ-Պ. ՊԱՏԿԱՆԵԱՆ

[ԵՐԵՒ 45]

«Հայոց աղջիկներ, ձեր հոգուն մատաղ,  
Երբ միտս էք զալիս, ասում եմ ես՝ «ախ»,  
Հալվում եմ, հալվում օտարութեան մէջ,  
Ա՛խ, սիրալս խորվում, ցաւիս չիկայ վերջ:  
Երբ կարմիր գինին բաժակումս ածած  
Սեղանիս վրայ առաջս է դրած,  
Աշքըս ակամայ վըրան եմ ձգում,  
Չեր սիրուն պատկերն եմ մէջը տեսնում:  
Տեսնում եմ և, ախ, միտքս է մոլորվում,  
Դառն արտասունքով աշքըս պըղտորում,  
Կարծում եմ բոլոր աշխարհն միթնեց,  
Արեն էլ խաւրեց, Էնդուր որ տիրեց:  
Հայոց աղջիկներ, ձեր հոգուն մեռնեմ,  
Չեր սիրուն աշերն էլ Երբ կը տեսնեմ,  
Էն սե-սե աշերն՝ սե ունքով պատած  
Կարծես երինային դալամով քաշած:  
Էն սե-սե աշերն՝ որ շատին սպանեց,  
Բայց էլի շատին զըժոխքից հանեց.  
Ես-էլ կենդանի տեղովս եմ մեռած,  
Առանց կըրակի էրուած, խորոված:

Ել Երբ կը տեսնեմ ևս ձեզ ման-զալիս,  
Բաղ ու բաղչայում սէլրան անելիս,  
Ինչ աեղ ամօթից վարդն-էլ է գեղնում,  
Երբ-որ ձեր կարմիր թշշերը տեսնում:  
Բլրուկն-էլ վարդից ձեր՝ ձայնը լսելիս՝  
Թըռչում է, թըռչում, ամպերում կորչում  
Եւ իր Արարշին տեսածն ասելիս  
Փառք քեզ, Տէր Աստուած, փառք քեզ է կանչում:

Հայոց աղջիկներ, ի՞նչ անուն տամ ձեղ,  
Թէ հրեշտակ ասեմ՝ հրեշտակ չեմ տեսել,  
Թէ մարդ անուանեմ՝ բէդամաղ կ'անեմ,  
Ուրեմն ի՞նչ անեմ, մոլորուած եմ ես:

Մոլորուած եմ ես օտար աշխարհում,  
Հաւատն էլ օտար, օտար և լեզուն,  
Աղջիկն-էլ օտար ու ձեզ չի նըման,  
Հայոց աղջիկներ՝ դուք էք աննըման:  
Չեր սէրն է միայն սըրտումըս պահած,  
Չեր սիրով միայն եմ ես կենդանի,  
Չեր սէրը միայն էս կեանքս մաշուած  
Օտարութեան մէջ դեռ կը պահպանի:»

ԳՀՈՐԴ ՍԻՐԻՍՍԱՆՆԱՆՑ

ԵԽԱՑԵՎ



ԼՐՈՒԹՅՈՒՆ

ԲԵՄԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐԻ

[Երես 58, առաջ 10 գլուխքներից:]  
 (Սազը եւ դուդուկը ածում են լեզվերէն պարի եղանակը.  
 աշ կողմից ներս են վազում տպասաւորները եւ կանգնում  
 Սէրգօի մօտ անշարժի) Տանը, տանըի... (Պարելով) ԲՇհ,  
 լՇհ, լՇհ, լՇհ...

[Եւ այլք:]

ՆԿԱՑՈՒԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Երես:	Տող:	Տպուած է:	Պէտք է:
1	6	ՎԵՐԼԵՒ	Առաստաղից
4	9	ՆԵՐՏԵԼԵՒ	Հուլս
8	10	«	ԴՆՈՒՄ
11	8	ԿԱՋԼԵՍ	ԿԱՋՔՍ
28	7	«	ՀԻՒՐԱՍԻՐՈՒՄ
31	13	ՍԱՆԱԺՄ	ՍԱՆԱԺԻՄ
45	« ՎԵՐԼԵՒ	ՎԻՐՃՆ	ՎԻՐՃՆ
«	14	ԿԱՄ ՊԻՄԱԳՐ	ԿԱՄ ՆՐԱ ՊԻ- ՄԱԳՐ
61	3, 7	ՆԵՐՏԵԼԵՒ	ՀԱՆ,
64	11	«	ԱԼՊԱՊՐՈՒՄ



ՀՀ Ազգային գրադարան



NL0357866

56.a.72

